

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
Organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԱԿ

№ 12-1
DÉCEM. - JANVIER
1932-1933
PARIS (France)

«ՀՈՑ ԵՆԴՈՓՈՒՍԿԱՆ ԴՈՂՆԱԿՅՈՒԹԵԱՆ» ԳՐԿԱՆ

1932 - 1933

Մշուշ պատած էր 1931ին: Մշուշ՝ քաղաքական, տնտեսական եւ ընկերային:

Մշուշը թանձրացաւ 1932ի ընթացքին, լոյսի եւ խաւարի սրընթաց ելեւէջներով: Եւ ահա տարին կը փակենք համատարած եւ անթափանցելի ամպակոյտերու ծանրութեան տակ:

1914ին, աւելի դիւրին էր նախատեսել դէպքերու ընթացքը, քան այսօր:

Աշխարհաստան պատերազմը, իր լեռնակուտակ դաշնագիրներով, աւելի ծանր մթնոլորտ ստեղծեց, աւելի ահաւոր կնճիռներ եւ աւելի վտանգաւոր պայթուցիկներ պատրաստեց, քան եղած է ո՛ր եւ է ատեն: Բովանդակ աշխարհը կը տքայ քստմնելի մղձաւանջի մը տակ, որ բազմազխանի հրէջի մը պէս կը բզբռէ, կը քամէ անոր կենսական երակները, եւ կը սպառնայ վերի վայր շրջել դարաւոր հաստատութիւններ:

Արդարեւ, մարդկութեան հոգին երբեք այնքան խռոված չէր որքան այսօր:

Եւ երբեք այնքան սուր կերպով մէջտեղ դրած չէր վրդովիչ հարցը, — պատերազմ թէ խաղաղութիւն:

Պատերազմէն 18 տարի յետոյ, պատերազմին անէծքն է որ կը խլրտի երկիրէ երկիր, ինչպէս մարած հրարուի մը:

Դժգոհ են եւ անհամբեր՝ պարտեալները: Դժգոհ են յաղթականները: Դժգոհ են եւ սաստկօրէն ջղագրգիւ՝ բազմութիւնները:

Նախ, աշխարհը կորսնցուցած է իր անտեսական բարօրութիւնը: Այլ եւս Գեռաւոր յիշատակի մը տպաւորութիւնը կը գործեն առատութեան տարիները:

Մէկ տարիէն միւսը, տնտեսական տագնապը այնքան սարսափելի համեմատութիւններ ստացաւ որ, այսօր աւելի քան երեսուն միլիոն

աշխատաւոր ձեռքեր նպաստ, ողորմութիւն մուրալու վիճակին են հասեր: Երեսուն միլիոն՝ համաձայն պետական-պաշտօնական վիճակագրութեանց: Մինչդեռ տասնապատիկ աւելի ահաւոր համեմատութիւն մը կը կազմեն անգիր թշուառութեանց փաստերը, ոչ միայն դառամեալ Եւրոպայի պողոտաներուն վրա, այլ եւ երիտասարդ եւ ոսկեցնցուղ Ամերիկայի մէջ: Վկայ՝ « անօթութեան արշաւները », որ արդէն սովորական դէպքերու կարգն են անցած, եւ որոնք նոյնքան կը սպառնան պետութիւններու ապահովութեան, որքան քաղաքական կամ զինուորական դաւերն ու բժրոստութիւնները:

— Անօթի՛ ենք. հա՛ց: Հա՛ց կամ աշխատանք:

Ոչ մէկ ատեն անօթութեան աղաղակը չէ հնչած այսքան ծաւալուն, այսքան դժբաղդին եւ սպառնալից:

Ի՞նչ խօսք որ, անօթութիւնը, ամէն բանէ առաջ, կը սրէ դասակարգային գիտակցութիւնը. կը խորացնէ անջրպետը՝ ունեւորին եւ չունեւորին միջեւ, փորելով հիմերը՝ հաստատուած կարգ ու սարքին:

Մանուանդ որ, ամէն երկրի մէջ ալ, անօթիներու անհամար բանակին առաջին շարքերը կը կազմեն նախկին պատերազմիկները, յաղթական թէ պարտեալ:

Անգլիոյ, Ամերիկայի եւ Ռումանիոյ մէջ — երեքն ալ յաղթական — «նախկին»ներն էին որ գլուխն անցան քաղցարշաւներուն: Ու նաեւ անոնք դարձան առաջին զոհերը՝ ոստիկանական հետապնդումներուն, խարազանի կամ հրացանի հարուածներուն: Կառավարութիւնները նոր զինուորներ արձակեցին պատերազմէն պարտասած, անկար եւ հաշմանդամ զինուորներուն կամ անոնց ընտանիքներուն դէմ, գնդա-

ցիրներով եւ ահարեկման ալլազան միջոցներով: Ինչպէս պատերազմի դաշտին վրա...

Եւ եթէ, այս անողոք քաղաքականութեան հետեւանքով, իւրաքանչիւր երկրի մէջ կը ծաւալի դատակարգային զիտակցութիւնը, միւս կողմէ արկածայի ատելութիւն մը կը խմորւի երկիրէ երկիր եւ ազգէ ազգ:

Ֆրանսան յաղթեց՝ շնորհիւ Անգլիոյ եւ Ամերիկայի: Իսպանիոյ Ժողովուրդը այսօր անգոր կատաղութեամբ լեցած է երկուքին ալ դէմ, անոնց վերադրելով բազմազան դժբախտութիւններ: Որովհետեւ, « յաղթական » երկիրը ստիպւած է կտրել երկուքուկէս միլիոն նախկին պատերազմիկներու պատահացը, վճարելու համար զինակիցներուն պարտքի սուկոսները:

Գերմանիոյ վեցուկէս միլիոն գործազուրկները անհիծելով հանդերձ ներքին՝ դատակարգային թշնամին, ակոյա կը կըրտեն հարեւանին՝ յաղթական Ֆրանսային դէմ, իրրեւ ուղղակի պատասխանատու իրենց անսելի թշուառութեանց:

Միւս կողմէ, երկու հակոռոնեայ հոսանքներ, բուլղարի մը ու Ֆաշիզմը նոր խրամատներ կը բանան ժողովուրդներու յարաբերութեանց, ինչպէս իւրաքանչիւր երկրի զանազաններուն միջեւ:

Աւելցուցէք, այս խմորումներուն վրա, քաղաքական հակամարտութիւններն ու պատերազմի հաշտ յարդարին խոր վէճերը:

Ո՛չ մէկ ատեն այնքան մերկապարանոց խայտառակութեամբ երեւան ելած էր պատերազմի դաշնագիրներուն թշուառութիւնը, որքան 1932ին:

Անցնող տարւան ընթացքին էր որ, ի դիմաց բոլոր պարտեալներուն, Գերմանիան աւելի եւ աւելի շեշտեց Վերսայի կապանքները խորտակելու կամքը:

Իր վերջին բանաձեւը — սպառազինութեանց իրաւունքներու հաւասարութիւն — սահմանւած է ճակատագրական հարւածը իջնցնելու պատերազմական դաշնագիրներուն, քանի որ արդէն թաղւած կը համարւի հատուցումներու հարցը:

Եւ զարմանալի չէ որ յաղթականները, բազմաթիւ ծանուցադիրներ փոխանակելէ յետոյ, հարկադրեցան տեղի տալ, վերջին պահուն, Գերմանիոյ վճռական յայտարարութեանց առջեւ:

Տակաւին ճշուած չէ իրաւահաւասարութեան խնդիրը. բայց, երբ յաղթական պետութիւններ համաձայնած են միջին բանաձեւի մը վրա, որ լռելիայն, սկզբունքով կընդունի Գերմանիոյ պահանջը:

Մտադրաբար պիտի լուծուի զինաթափութեան խորհրդաժողովին մէջ, որ ուրիշ մէկ երեսն է աշխարհաւեր ողբերգութեան:

1899էն ի վեր (Լա Հէյ) սեղանի վրա է այս խնդիրը, — զինաթափութիւն: Իսպան, կրնայի՞ք հաշտել այդ օրէն սաղին պայթած պատերազմները, — անշուշտ յանուն արդարութեան եւ խաղաղութեան...:

Ինչքան դաճեր վրան, արքունիքներ ցիր ու ցան եղան եւ արքաներ գործազուրկութեան դատապարտեցան այդ օրէն ի վեր: Եւ սակայն, զինաթափութիւնը բազմանք մըն է տակաւին: Եթէ ոչ նոր դաւ մը՝ մրցակիցը կողէն դարնելու:

Զինաթափութեան ո՛ր եւ է փորձ, առանց դաշնագիրներու վերաքննութեան, թերեւս հաճոյք պատճառէ խաղաղասէրներուն, բայց չի կրնար փրկել խաղաղութիւնը:

Այսօրւան պայմաններուն մէջ, անհրաժեշտ է նախ վերահաստատել հողիներու խաղաղութիւնը: Այն ինչ որ կը կոչեն «բարոյական զինաթափութիւն»:

Իսկ այդ հրաշքին կարելի՞ է հաւատալ, երբ երէկւան պարտեալները ուժ հաւաքած եւ ըմբոստացած են, երբ դաշնագիրները կեղծւին, կը ճեղքուին բազմազան «սապոթաժներով, երբ ամբողջ ժողովուրդներ կը խեղդուին եւ ուրիշներ կը յղիկանան արարողար, անբնական սահմաններու մէջ, եւ դեռ ուրիշներ կը ծիրին ի սփրուս աշխարհի, ափ մը հողի կարօտէն:

Եւ երբ, միլիոններ ու միլիոններ — ամբողջ երկիրներ եւ ժողովուրդներ — կը խլրախն ու կը գալարուին ի խնդիր հացի...:

Իսրայիլական զինաթափութեան սպացոյց է թէ հողեկան ջլատման, մտաւախութեան եւ փոխադարձ կասկածամտութեան, երբ տարի մըն ալ սահեցաւ զինաթափութեան ձեռնարկին վրա, առանց գործանկան ելլելի: Միայն եւ միայն նախնական, մասնագիտական քննութիւններով: Քննութիւններ ուր մէկուն ծրագիրը կը ժխտէ միւսը, ուր մէկ օրէն միւսը նոր քար մը կը ձգուի անխնդրուն մէջ:

Իսպան, թողո՛ւնք աշխարհը եւ դառնանք մեր տունը:

Ինչպէս անցաւ տարին, ազգային-քաղաքական եւ կուսակցական տեսակէտով:

1932ու, տասնամեակ մը բոլորեցիցիք իրրեւ պանդուխտ, մասնիկ — մասնիկ տարտղւած երկրագոռնդի բոլոր ցամաքներուն վրա:

Տասնամեակ մը՝ ուր հազիւ երկու տարի դիմացան վերջին յոյսերը (1924, Լոզան):

Քանի յառաջացան տարիները, այնքան մթապնեցաւ հորիզոնը՝ Հայկական Դատի յանդուութեան տեսակէտէն: Կտրւած՝ արմատէ եւ փուլած՝ բոլոր պողոտաներուն վրա, աւելի եւս համոզեցանք, թէ «տարէն չկայ մեզ յոյս», եւ թէ ինչ որ ունինք եւ պիտի ունենանք, ուշ կանուխ, ամէն բանէ առջ կախում ունի մեր ինքնավստահութենէն ու ճիւղերէն:

Այս գիտակցութեամբ է որ, Գաշնակցութիւնը, մասնաւոր գուրգուրանքով կը հետեւի ազգային կազմութեան եւ զօրացման ո՛ր եւ է ձեռնարկի:

Շատերը մեր բարեկամներէն ու ընկերներէն, յաճախ չփոթեցնելով նախապատերազմեան շրջանն ու ներկան, կը կարծեն թէ փոխած է կուսակցութեան ուղեգիծը:

Մինչդեռ, կուսակցութեան այսօրեան ճիշդն ու գործունէութիւնը կրկնապատիկ աւելի եռանդ եւ խորութիւն կը պահանջեն, միշտ ձգտելով միեւնոյն հիմնական նպատակին:

Մեր ժամանակակից պատմութեան մէջ, ե՞րբ ենք ունեցած երկիր մը՝ հայ ժողովուրդի երազներուն տրամադօրէն հակոտնեայ իշխանութեամբ, եւ աւելի քան կէս միլիոն ժողովուրդ՝ տաշեղի պէս նետած՝ աջ ու ձախ, ի սփիւռս աշխարհի:

Այս պայմաններուն մէջ, ինչպէս ժողովուրդը ինք, Հ. Յ. Գաշնակցութիւնն ալ ստիպւած է անկարելի փորձել, եթէ ոչ նոր նաւուներ կատարելու, գոնէ եղած վաստակը ամբացնելու, դաշիքին ճամբան հարթելու համար:

Ահա դիտարկ վաստակը, — Հայաստան մը՝ մէկ միլիոն ժողովուրդով:

Գաշնակցութիւնը, թէեւ զրկւած՝ երկրի մէջ գործելու հնարաւորութենէն, երկրէն դուրս կատարած է եւ կը կատարէ ինչ որ կախում ունի իր ուժէն եւ ինչ որ սահմանւած է իր ժողովներով:

«Բացէ՛ք դուռները» — աղաղակեցինք լրման տասը տարի: Եւ այսօր տարագիր բազմութեանց սեփականութիւնը դարձած է այս նշանախօսքը, — ներդադրի:

Անշուշտ, շատ աւելի գործօն դեր կրնար կատարել Գաշնակցութիւնը, եթէ իր բարի կամքէն կախուած ըլլար ներգաղթը:

Ուժ աւելք երկրի վերաշինութեան, — թելադրեցինք ուր որ կը հասնէր մեր ձայնը:

Եւ ահա նոր գիւղերու, աւաններու շինութիւնը գրգռած է շատ մը Հայրենակցական Միութեանց բարի նախանձը:

Գաշնակցութիւնը, ուղղակի կամ անուղղակի նպաստելով հայկական կորիզին զարգացման եւ զօրացման, կրնա՞ր, ուրիշներուն պէս, մոռացութեան տալ տարբեր աշխատանքներ,

միշտ միեւնոյն հիմնական առաջադրութեամբ, — Հայկական Դատ:

Այդ աշխատանքներուն ծանրութեան կեդրոնը կը կազմէ, միշտ Թուրքիան:

Ի՞նչ կապացուցանէ ամբողջ դաշնակցական մամուլէն եւ բեմերէն արձակւած աղաղակը՝ ամէն տարի եւ մասնաւոր 1932ին, — Միացեալ ձակաւտ:

Միացեալ ձակաւտ՝ բոլոր անոնց հետ որ կը հաւատան Հայկական Դատին եւ զայն հետապնդելու կամք եւ կարողութիւն ունին, աւելի կամ պակաս:

Յատկապէս դաշնակցութեան մէջ, ուր կը սպառի մեր կորովին մեծագոյն մասը, Գաշնակցութիւնը իր շարքերուն զօրացման հետ կապած է արժէքը իր դերին եւ ծանրութիւնը իր պատասխանատուութեան:

Այս գիտակցութիւնը այնքան արմատ բռնած է մեր շարքերուն մէջ որ, մասնաւորապէս 1932ին, ամէն տեղ շարքերու սուտարացումը հոչակեցաւ նշանախօսք, եւ արդիւնքը դնահատելի է մեծապէս: Անպակաս է նոր կորիզներու ստեղծումը:

Ինչպէս, Երկրի մէջ, Ֆիդիքական գոյութեան համար, այսօր ալ, արտասահմանի մէջ, Գաշնակցութիւնը ամուր բռնած է ինքնապաշտպանութեան դրօշը:

Ազգապահանջանում, պայքար այլասերման դէմ, զարգացում աղաղային մշակոյթի, զօրացում դիմադրական կորովի, — այս բոլորը կը կազմեն լայն ձակաւտ մը, որ միացած քաղաքական-յեղափոխական ձեռնարկներուն եւ ճիւղերուն հետ, մեր առջեւ կը բանան պատասխանատուութեան եւ գործունէութեան տաժանելի այլ ոգեւորիչ ասպարէզներ:

Տասը տարի յետոյ, տասնապատկւած են մեր պարտականութիւնները, եւ 1933էն իսկ, մենք պէտք է պարտաստ ըլլանք մեր յանձնառութեանց ծանրութիւնը վերցնելու:

Մասնաւոր որ, ամայի կղզի մը չենք բնակիր, այլ կը թաւախինք միջազգային հրմշտութեան եւ ընդհարումներու ճամբուն վրա:

Համաշխարհային կացութեան անստուգութիւնն իսկ բացատրի արթնութիւն եւ պատրաստութիւն, ուժերու բազմապատկութիւն եւ համախմբում կը պարտադրէ:

ՀՆԳԱՄԵԱԿ ԶՈՐԱ ՏԱՐՈՒՄ

Դեկտեմբերին լրացաւ խորհրդային հնգամեայ տնտեսական ծրագրի իրագործման ժամանակամիջոցը, այսպէս կոչուած՝ հնգամեակը չորս տարում:

Որքան հնգամեայ ծրագրի սկզբին բարձր էր բուշիկները տրամադրութիւնը, այնքան այսօր նրանք ընդհանուր են երևում, թէև նրտաքննապէս չարունակուած են ճառել ձեռք բերուած «աննախընթաց յանդուրժիւններին» և զտոցիրիստական յայթանակի մասին: Դեռ նոր համամիութենական փողկոմխորհի նախագահ Մոլոտովը հաստատացնում էր ինժեներներին ու անխիճներին համազումարին, թէ «առաջին հնգամեակը յաջողել է լի ու լի» և «նորոգ. Միութեան սահմաններում տրնտեսութեան ընկերվարական ձևերը կատարեալ յայթանակ են տարել»:

Այս պաշտօնական լաւտեսութեան կողքին, սակայն, ակնյայտին կերպով երևում է Հեասթապուրիւնը. խորհրդային մամուլը այժմ գրեթէ չի խօսում հնգամեայ ծրագրի մասին, մինչդեռ ի՛նչ ազմուկ էր հանուած մի քանի տարի առաջ, երբ ամէն թերթի գլուխին մակարդում էին Ստալինի «հրեղէն» խօսքերը՝ «Ա՛նքեղ կը հասնենք ու կանցնենք Ամերիկայից»: Հիմա այլևս ոչ միայն Ամերիկայի մասին խօսք չկայ, այլ յաջորդ հնգամեայ ծրագրի խնդիրն էլ վերացած է հանրային ուշադրութեան կենտրոնից և նոյն իսկ յայտնի էլ չէ, արդեօք երկրորդ հնգամեակ պիտի լինի, թէ 1933 թւականը պիտի յատկացուի առաջին հնգամեակի ճեղքածները կարկառելու, ինչպէս խորհուրդը է ապրիլ Ծրցոյցին:

Լուրջ, տնտեսական հարցերից հստակացողութիւն ունեցող բուշիկներն, անուշադ, դիտակցում են, որ առաջին հնգամեակը վերջացաւ ճախողաբար, յամենայն դէպս, չուեց սպասուած արդիւնքները: Եթէ մի կողմ դնենք Հարեւմային կարգով ստեղծուած «գիւղացիները», որոնք անսպասելիորէմ բարձրացած բուրգերի տպաւորութիւնն են թողնում, հնգամեակի առաջադրած տնտեսական հիմնական խնդիրներին մեծ մասը մնաց չլուծուած:

Ի՞նչ էր հնգամեակի նպատակը: — Ստեղծել ընկերվարական տնտեսութեան համար ամուր հիմքեր, նորոգ. Միութիւնը ազատել արտաքին կախումից և մեքենաների ու հումքի տեսակէտից դարձնել ինքնաբաւ, ճարտարաբանական հասցնել այնպիսի միջակի, որ ներքին պահանջները բաւարարուեն սեփական միջոցներով. երկրագործութիւնը բարձրացնել այնքան, որ քաղաքներն այլ ևս սպահանջուած լինեն սպորտսպի միջոցներով և դործարանները՝ հում նիւթերով, որ աւելանայ աշխատանքի արտադրութեան շարք, որ աշխուրդները ինքնաբովէջ պակասի, որ լուրջ բարեփոխութիւններ մտցնին բանուորութեան ընկերային ու տնտեսական կենսքի պայմաններում, որ, մի խօսքով, հնարաւոր դառնայ «տոցիրիկի կառուցումը մի երկրում»:

Այս առաջադրանքներից և ո՛չ մէկը չիրագործուեց սպասուած ծաւալով: Ծիւղ է, երկիրը աներկակայելի գոհողութիւններ արաւ. փողովբազական ուժերը հասան լարման անհնարանի աստիճանների. երբեք, ոչ մի երկրում դուրջ չիրարարութեան թախը այնպիսի ուժ ու ծաւալ չտացաւ, ինչպէս խորհրդային տնտեսութեան որոշ ճեղքերում. կենսքի կոնչեցին հսկայ դործարաններ, կեխարարայաններ, հանգստի կենտրոններ, բայց երկրի տնտեսութեան համազումարը դրանից չհասնեց: Որովհետև, մինչ մի կողմից թանգարտէք կառուցում-

ների վրա անհաշիւ դրամ ու մարդկանք ենուց էր շուայում, միւս կողմից փողովբազական տնտեսութիւնը մասնուած էր անիսկ ոչնչացման, գիւղատնտեսութիւնը քայքայուած ու փշանուած էր, աշխատաւորութիւնը հարստահարուած և Ֆիզիքապէս ու բարոյապէս այլաներում: Անոյս խաղաղու պէս, բուշիկներն իրենց ամբողջ միջոցները նետեցին խաղի մէջ և — տանուլ տին: Երբեք, ո՛չ մի երկրի փողովբազական պիտի թշուառութեան չի հասցուած տնտեսական շահագործման հետևանքով, որքան խորհրդային իշխանութեան տակ ապրող փողովբազանները հնգամեայ ծրագրի դործարութեան տարիներին:

Ինչպէս ասացինք, բուշիկներն իրենք այժմ դեհարազուած են թիչ խօսել հնգամեակի ձեւաճնուածների մասին, բայց նրանք փոխարէն այդ հարցով շատ է գրաշուած արտասահմանի տնտեսական միտքը: Իրար յետևից լոյս են տեսնում բազմաթիւ յօդուածներ, հրատարակուած են ամբողջ հատորներ, որոնք մէջ մանրադնին վերլուծութեան ու գնահատութեան են ենթարկուած բուշիկներն փորձի արդիւնքները՝ հեղինակաւոր տնտեսագէտների կողմից: Բնականաբար, ուսումնասիրութեանց հետևանքները միշտ նոյնը չեն. նախով թէ ով ինչ շարժանիչով է մտածում նիւթին կամ ինչ է փնտրում նրա մէջ, բայտ այնմ տարբերուած են և եզրակացութիւնները: Բայց մէկ կէտում համաձայն են ամենքը — հնգամեայ ծրագիրը չի յաջողած. առաջադրուած խնդիրը իրականացուած չէ, և այսօր նորոգ. Միութիւնը տնտեսական տեսակէտից աւելի է կախուած դրամատիրական աշխուրհից, քան հնգամեակից առաջ:

Հնգամեակ ծրագրի անյաջողութեան պիտաւոր պայցոյցներից մէկն էլ կարելի է տեսնել դրամատիրական պետութիւնների վերաբերումի մէջ. մինչ հնգամեակի առաջին շրջանում ահազին իրարանցում է անհանդատութիւն էր նկատուած ամէն կողմ, դէմպիլնգի ուրուականը արտասանցնում էր շատերին, այսօր նման սպառնալիքների հաստատացող չկայ այլ ևս: Փաստը ցոյց տուեց, որ խորհրդային արդիւնաբերութիւնը ոչ միայն երկրագունդը չողողեց աման սպրանքներով, այլ սեփական ներքին կարիքներին էլ զուհացում չուեց: խորհրդային տնտեսութեան արտածման և ներածման թեքը, հնգամեակից յետոյ էլ, բայտ էութեան արմատական փոփոխութիւն չեն կրած. նորոգ. Միութիւնն այսօր աւելի սուր պահանջ ունի դրամատէր երկրների վարկերի և պարանքների և աւելի մեծ կախման մէջ է զգիւշատիչ իմպորտիւններից»:

Այս պայմաններում ծիծաղելի չէ՞ խօսքը «հնգամեակի յաջողութեան» կամ «ընկերվարութեան յայթանակի» մասին:

Մեզ համար, ի հարկէ, աւելի հետաքրքրական են այն անդադարձումները, որ հնգամեակը ունեցաւ մեր երկրի տնտեսութեան վրա: Ծիւղ է, Հայաստանը ոչ միայն քաղաքական, այլ տնտեսական տեսակէտով էլ նորոգ. Միութեան մէկ հասարակ մասնակի է և կախման մէջ է Ռուսաստանից, հետևաբար հնգամեակի անդադարձումը ամբողջ Միութեան տնտեսութեան վրայ յատուկ է և Հայաստանին, բայց վերջինում կան և տեղական բնոյթ կողո որոշ պայմաններ, որոնք չեն կարող համապատասխան հետևանքներ չտալ և որոնք պէտք է ուշադրութեան առնեն Հայաստանի արդի տնտեսութեան շարժ ու բարին հասկանալու համար:

Բնականաբար, Հայաստանի համար էլ ամենից

առաջ ծագում է միևնույն հարցը՝ հնգամեայ ծրագիրը իրականացած է թէ ոչ :

Հարցի ընդհանուր պատասխանը պարզ է. ո՛չ, իրականացած չէ: Իսայ Խ՛նչ աստիճանով, դժուար է ճշգրիտ պատկերել տալ: Հայ կոմունիստները, որ հընդհանայ ծրագրի առաջին շրջանում այնքան առատաձեռն էին վերահսկարական տեղեկութիւնները խնդրում և ամէն ջանգով խնայելու թելը էին շարունակելու հարցը, ներքին տնտեսական կարգի հարցը, հիմա շատ են ժխտ և ակերի գերադասում են ընդհանուր խօսքերով սահմանափակելու: Այնուամենայնիւ խորհրդային մամուլի ուշադրի ընթերցողը — որքան և տաժանելի լինի այդ ընթերցանութիւնը — կարող է գտնել թւեր ու տեղեկութիւններ, որոնց հիման վրա կարելի է որոշ չափով պարզել հնգամեակի ընթացքը Հայաստանում:

Հնգամեայ ծրագրով Հայաստանի արդիւնաբերութեան առջև դրւել էին հետևեալ խնդիրները.

« ա) Ամէն կերպ զարկ տալ խնդրողներարտաբերութեան՝ առանձին շեշտ դնելով պղնձարդիւնաբերութեան և շինարարի արդիւնաբերութեան գործի վրա:

« բ) Եւրոպայի արդիւնաբերութեան հարաբերութիւնները հիման վրա զարկ տալ քիմիական արդիւնաբերութեանը:

« գ) Զարկ տալ տեղական հումքը վերամշակող արդիւնաբերութեանը »:

Ղեկավարելով այս սկզբունքներով՝ Հայաստանի արդիւնաբերութիւնը, հնգամեակի վերջին տարին պիտի տար հետևեալ արդիւնքները.

Պղնձարդիւնաբերութիւնը 70%ով պիտի գերազանցեր 1913թ. արտադրութիւնը և պիտի տար 8120 տոն գումար՝ պղինձ:

Արթիկ-տուֆը պիտի տար՝ 1,5—2 միլիոն խորանարդ մետր ջար:

Պիտի շինէր, Գուալուրի մօտ, ցեմենտի գործարան 300-000 տակառ արտադրութեամբ:

Երևանում հիմնելու էր փայտամշակման գործարան, Չանդեղուրում և Սեւաբում՝ մեծ սողցարաններ և մի քանի շրջիկ սողցարաններ:

Երևանում, Փամբակում և Իջևանում կառուցելու էին դրանիտ և մարմար տաշող գործարաններ:

Քոլապեքան կայարանում պիտի կառուցէր բազալտ հարող գործարան:

Հարաքիլիսայում պիտի հիմնէր քիմիական կոմբինատ:

Լեւոնաքաղտր պիտի ընդարձակէր և պիտի ունենար 100-000 փլիկ, 2500 դազեան և տրեկտուսի գործարան՝ տալով 48-809-000 ռուբ. արտադրանք:

Երիւկում հիմնելու էր շաքարի գործարան:

Երևանում և Ալտաքակում հիմնելու էին երկու պահածոյի գործարաններ:

Նորֆայազէտում հիմնելու էր սուլայի գործարան: Պիտի վերակառուցելու պիտի, կոնկրետի և ալյուրի արդիւնաբերութիւնը: Եւ մի շարք ուրիշ մանր ու խոշոր արդիւնաբերական ձեռնարկներ:

Այս ամենի վրա ծախսելու էր մօտ հարիւր միլիոն ռուբլի դրամ: Եւ, ի հարկէ, Համապատասխան չափով աճելու էր և արդիւնաբերութեան արտադրանքը, որ հնգամեակի արտադրումով աւելանալու էր 307,8%ով՝ հասնելով 75-522-000ր. հսկայական գումարի**):

Անցնելով հնգամեայ ծրագրի գերադասուածութեան վերաբերուող մասին՝ ասենք միայն մի քանի թիւեր: Հայաստանում մինչև հնգամեակի վերջը պիտի ոռոգուէր 62-300 հեկտար նոր հող և 12-200 հեկտարի ոռոգում էլ պիտի նորոգուէր:

Հնգամեակի ընթացքում պիտի հիմնէին նոր գերդեր և պիտի վերաբնակեցէին 10-505 տնտեսութիւններ, այլ և պիտի վերաբնակէին և հողով պիտի բաւարարուէին 9640 տնտեսութիւն կամ 48-200 շունչ փա-

խրտականներ, դաղթականներ և հողագործի ու օսկաւահող գերագիններ:

Հայաստան պիտի ներմուծէր 27-000 գութան և 680 տրակտոր: Հնգամեակի սկզբում Հայաստանում կար 214 տրակտոր:

Գերադասուածութեան արտադրանքը պիտի աճէր և ինքնաբէջը պիտի պակասէր: Հնգամեակի վերջին, բամբակի, ծխախոտի, ալգինների տարածութիւնները պիտի ընդարձակէին զգալի չափերով:

Գերադասուածութեան վրա էլ ծախսելու էր ակերի քան հարիւր միլիոն ռուբլի:

Նախատեսւած էին բոլոր մանրամասնութիւնները: Այսպէս, հաշուած էր, որ հնգամեակի վերջին Հայաստանում լինելու էր 35-800 խոց, 1-523-900 ոչխար, 2-396-000 թուռն, որոնց «միլիոն ձաթարտութիւնը լինելու է 60ից 80 տոն»):

Հայաստանի իրականութեան ծանօթ և խորհրդային մամուլին հետևող մարդիկ գիտեն, որ այս երևակայական թւերի մեծ մասը մնացել է թղթի վրա իրեն սնուած տառ: Թէ արդիւնաբերութեան և թէ գերադասուածութեան ընդհանուր հնգամեայ ծրագրի շատ յօշուածները գործարարութիւնը Հայաստանում անպատկառ էլ չէ, ծրագրի մէկ խոշոր մասը չի աւարտուած, իսկ որոշ մասեր նոյն իսկ յետ են գնացել, ակերի յետ, քան հնգամեակից առաջ:

Հնգամեայ ծրագրի բոլոր թիւերի ցնունթիւնը մեղ շատ հեռուները կը տանէ, բայց կարևոր մասերի վերլուծութիւնն էլ բաւական է ընդհանուր պատկերը պարզելու համար: Առնենք, օրինակ, մի քանի տեղեկութիւններ Հէնց իրենց՝ բոլշևիկների թւական տեսանկիւնից, որքան որ նրանք հրապարակ են դրած «ինքնաշնչադասութեան» կարգով, և ծրագրի համեմատենք իրականութեան հետ: Ինչպէ՞ս է ներկայանում իրականութիւնը:

Պղնձարդիւնաբերութիւնը որոշուած է բարձրացնել 70%ով և հնգամեակի վերջին արտադրել 8120 տոն: Ինչպէս յայտնի է, պղնձի պաշարը խորհրդային արևմտաեւրոպական ամենէն ցաւաւ կողմերից մէկն է: Հնգամեայ ծրագրի հիմնական կէտերից ոչ մէկը համարեա իրականացած չէ. պղնձարդիւնաբերութեան մեքենայական արքաւորումը վերանորոգումը մնացել է թղթի վրա, Գախանի Ֆլոտացիոն գործարանի կառուցումը կրեալի ջալիքով է առաջ գնում և յայտնի չէ թէ երբ պիտի վերջանայ: Հետազոտական աշխատանքները գնադաղ են ընթանում. մասնագէտների և բանուորների «հոստուածութիւնը» առասպելական չափերի է հասել, որովհետև աշխատանքի, ապրուստի և բնակարանային պայմանները անտանելի են: Եւ հետևանքը՝ Պղնձի արտադրութիւնը ամէն տարի վերջացել է իսկ հնգամեակի վերջին: Եւ թիւապատկերում, որովհետև հնգամեակի վերջին արտադրանքի, նշանակուած է 6000 տոն, բայց այս թիւն էլ լրացած չէ:

Նոյնքան և, թերևս, ակերի կարևոր խնդիր է հընդհանայ ծրագրում բամբակի մշակութիւնը: Ինչպէս պիտի, բամբակ էլ համախոթութեանակա նշանակութիւն ունի և աւարկայ է Մոսկուայի յատուկ ուշադրութեան: Այս ճիւղում էլ հնգամեակի իւրաքանչիւր տարին անցաւ սուր թիւապատկերումով և քանակական, բայց մասնաւոր որակական թւերը երբեք չլրացւեցին: Այսպէս, 1932 թւին որոշուած էր ցանել 30-000 հեկտար, բայց փաստուէն ցանեց 25-000: Նոյնթերին պիտի վերջանար հաւաքման գործը և պիտի մթերուէր 15-000 տոն բամբակ, այս ինչ գնկտներին դեռ թամբակի մէկ խոշոր մասը մնում էր դաշտերում չհասաքած, իսկ առ դեկտ. 17 մթերուած էր միայն 9739 տոն, այսինքն՝ տարեկան ծրագրի հարկ 67,2%ը: Մրագրի

*) «Խարիրդ. Հայաստան», 2 ապր. 1929.
**) «Խարիրդ. Հայաստան», 2 ապր. 1932.

*) «Խարիրդ. Հայաստան», 10 և 11 ապր. 1929.

նման «խախտուակ» թերակառուցման հետևանքով որոշում է չարորդ, 1933, տարի ցանկիչք բամբակի տարածութիւնը մեծ չափով կրճատել և սահմանափակել միայն 25-800 հեկտարով:

Բամբակի «բարակական ցուցանիշները» աւելի վատ, աւելի «աւագանգող» են. մինչ 1913թ. մէկ հեկտար հողից ստացւում էր 9 ցենտներ բամբակ, 1931ին ստացւել է 4.5 ցենտ., իսկ 1932ին՝ 6. վերջին թիւը ենթադրական է, որովհետև, ինչպէս տեսանք, բամբակի հաւաքում դեռ վերջացած չէ և անհամահասկան չէ, որ արդիւնքը ակնկալածից պակաս կը լինի:

Հայաստանի խորհրդային տնտեսութեան այս երկու «հարւածաշրջան» ճիւղերից աւելի լաւ վիճակում չեն և միւս ճիւղերը: Եւ նոյն իսկ աւելի վատ: Այսպէս՝ Եփրատի շաքարի գործարանի շինութեան դեռ չեն էլ ձեռնարկել: Չեն ձեռնարկում նաև Գոյազարանի բազալի պորֆիրիտի շինութեան: Նոյն վիճակում է և Նոր Բայազետի օսյալի գործարանը: Նոյնպէս և մեծ սոցցարանները, փայտամշակութեան, պահածոյի և գրաւորի ու մարմարի գործարանները: Արթիկ-տուֆի տեխնիկական սարքաւորումը չի լրացւած և ծրագրերը մնացել է թերի: Դաւալոյի ցեմենտի գործարանը, Հրոշակատարի Ցեմէնտի, որի շուրջ այնքան դաշտաղայ կայ, նոյնպէս չէ վերջացած: Պիտի աւարտւելը 1932թ. դեկտեմբերին, բայց շինարարութեան ընթացքը այնպէս է, որ ոչ մի կայանութիւն չկայ գոյաշակու, թէ երբ կարող է աւարտուել: Կիսատ է մնացել և Ղարաքիլիսէի քիմիական կոմբինատը, որի գործարկումը նշանակւած էր 1932թ. առաջին եռամսեակում, այս յետաձգւեց յուլիսին, ապա՝ նոյեմբերին, իսկ այժմ թողնւած է անորչ փամանակով: Նոյն ձգձգումներին ենթարկւեց և Չորապէտը, որ պիտի բացւեր 1932թ. յունւարին, ապա յետաձգւեց մարտին, յետոյ՝ յունիսին և, վերջապէս, «բացուեց» նոյեմը: Ենի: Չակերտի մէջ ենք աւանտ բացւեց բաւը, որովհետև փաստորէն Չորապէտի բացումը եղել է միայն ձեռնկան կերպով, խորհրդային իշխանութեան 15 ամեակը հանդիսաւոր կատարելու նպատակով: Գործի դրամը է միայն մէկ աքրեզաւոր, որը դեռ լրիւ Չորապէս չէ:

Այս փաստերն իսկ բաւական են տեսնելու Համար, որ հնգամեայ ծրագրի Հայաստանի մասը շատ հեռու է իրագործւած լինելուց:

Անցնելով գիւղատնտեսութեան՝ մեք տեսնում ենք, որ այս բնագաւառում «հնգամեակը» շատ աւելի արմատական հետեւանքներ է աւել: Նախ՝ կոլտնտչի-նարարութեան և դիւղը «սոցիալիստական ուսուցիչ» վրա դնելու տեսակէտից կատարւած է աւագին աշխատանք: 1929-30 թվականներից սկսած բոլշևիկները յամաօրէն քայքայում են Հայաստանի գիւղացիական տնտեսութիւնը: Մի շարք դժամ գործերից ու ողբերգական իրադարձութիւններից յետոյ, որոնց մանրամասնութիւնները ծանօթ են «Քրոչակի» ընթերցողներին և որոնք յուսահատ հայ գիւղացուն հասցրին մինչև գինւած ապստամբութիւն, բոլշևիկներին յաջողեց Հայաստանի գիւղացիութեան շուրջ 40%ը ամփոփել հաւաքական տնտեսութիւնների մէջ: Այս կողմից հրեզամայ ծրագրերը իրագործւած է աւելիով, ցայց թէ նման «չարութիւն» ինչ արդիւնք է աւել, քայց են աշխու բոլշևիկների հաղորդած հետեւեալ թւերը:

Ըստ Կենտրոնական Վիճակագրական Վարչութեան տւեալների, Հայաստանում 1929-32 տարիների ընթացքում ցանւած հացահատիկների և յորիանման բոյսերի տարածութիւնն ու բերքը այսպիսի պատկեր էր ներկայացնում*):

Տարի	ընդհ. բերք ցննմներով	մէկ հեկտարի քերքը ցննմներով	ցածրի տարածութիւնը հեկտարով
1930	3-033-709	9,0	337-076
1931	2-666-000	8,3	314-000
1932	1-578-000	5	316-000

Ի՞նչ են ստում այս թւերը: Նրանք ցոյց են տալիս այն զարհուրելի անկումը, որին ենթարկւել է Հայաստանի երկրագործութիւնը իբրև հետևանք կոլտնտչական թաղաքականութեան: Տարւէ տարի, թէև կատարութեան գործադրած բուն միջոցների հետևանքով ցանքի տարածութիւնը խիտ կրճատման չի ենթարկւել, բերքը ընկել է անօրինակ չափով, հնգամակի սկզբի համեմատութեամբ գրեթէ կէս առ կէս, մէկ հեկտարից 9 ցենտների փոխարէն՝ 5 ցենտներ, մինչ պատերազմից առաջ, 1913թ. մի հեկտարից ստացւել էր 8,3 ցենտներ: Սա նշանակում է աւել ու քայքայում, կատարեալ աղէտ Հայաստանի փողովորդական տնտեսութեան համար:

Եւ ինչդիրը միայն հացահատիկներով սահմանափակւած չէ. նոյնն է դրութիւնը գիւղատնտեսութեան և միւս ճիւղերում: Այսպէս դեռնախնձորի մէկ հեկտարը 1913ին տարին էր 97 ցենտներ, իսկ 1931ին՝ 66 ցենտներ, 1932ին՝ 74ց.: Սոսողը՝ 1913ին մէկ հեկտարից՝ 75 ցենտներ, 1931ին՝ 53,1ց., իսկ 1932ին՝ 41: Ուրիշ խօսքով, բուն կոլտնտչական տարիներում Հայաստանի հողի բերքատուութիւնը ընկել է մէկ երրորդով ու նոյն իսկ կիսով:

Հնգամեայ ծրագրի գիւղատնտեսական ձեռնարկներին մեծ մասն էլ մնացել է չիրագործւած. պիտի ուղղուէր 62-300 հեկտար նոր հող. մէկ տեղը շօշափելի գործ ներկայացւում է միայն Ղուերի ուղղման աշխատանքը. յայտարարեց թէ վերջացած է 3000 հեկտարի ուղղումը, բայց հետագային այդ հողի մասին ոչ մի լուր չէրկեաց, այնպէս որ չի կարելի տեսնել, թէ իրօք այդ հողերը ուղղու՞մ են:

Նոր գիւղերի կառուցումը ու 10-505 տնտեսութիւնների վերաբնակեցումը մնացել է բարի ցանկութիւններ սահմանում: 48-200 շուշի փաստականների, զաղթականների ու սակաւահողների վերաբնակեցումը նոյնպէս չի իրականացւած. մինչև այժմ շուրջ վեց հազար զաղթական է տեղափոխւած Հայաստան, և ծրագրի այդ մասով էլ սահմանափակւած է:

Մրազըւած 27-000 դուրեանի շնչին մասը միայն ներմուծւած է Հայաստան: Նոր ներածելիք 680 տրակտորի փոխարէն, հնգամեակի վերջին Հայաստանում հաշււում է շուրջ 400 տրակտոր, որից 214ը կար առաջ, որով, ուրեմն, հնգամեակի ընթացքում Հայաստան բերւած է ոչ աւելի քան 200 տրակտոր փոխանակ 680ի:

Հնգամեակը իր կոլտնտչիւնարարութեամբ աղէտաւոր եղաւ, մասնաւոր, Հայաստանի անասնապահութեան և թռչնարուծութեան համար. ոչ միայն խոզ ու ոչխարի թիւը յաճեց, ոչ միայն հաւը «60ից 80 հատ» հաւ կիթ չի ածու, այլ տեղի ունեցաւ կենդանիների անխնայ կտորած: Հայաստանի անասունների և թռչունների մօտ մէկ երրորդը փչացւեց բուն կոլտնտչական շրջաններում: Եւ անասունների ջարդը դեռ շարունակւում է թէ վերջացիների ձեռքով և թէ, մասնաւոր, կոլտնտչներում և սովիտոյներում տիրող խախտակ անտնտեսափարութեան հետևանքով:

Չարունակները: Այս փաստերն էլ արդէն, որոնք բոլորն էլ անւած են խորհրդային մամուլից, բաւական են համոզելու Համար, որ բոլշևիկների հաւատարմութեամբը հնգամեայ ծրագրի յաջողութեան մասին ճշմարտութիւնից շատ են հեռու: Ո՛ր, հնգամեակը վիժել է: Բայց և այնպէս կարելի չէ հերքել նրա ազ-

*) «Նորիդ»։ Հայաստան, 24 հոյնիս. 1932.

դեցուցիչներ խորհրդային անտեսութեան վրա, մանաւանդ Հայաստանում:

Իր դրական մասում հնգամեակը Հայաստանին տեց կամ, աւելի ճիշտ, տալով վրա է մի շարք խոշոր ձեռնարկներ, կարելի է ասել, բացառաբար արդիւնաբերութեան և երկրի ելեկտրականացման ընազատաւում: Չորսուցէսի ու Բանազեռուկի աւարտումով երկիրը կունենայ պատկանելի քանակութեամբ շարժիչ ուժ: Զմեխական կոմբինատն ու պղնձի գործարանը վերջանալուց յետոյ, անկասկած, կը լինեն խոշոր ձեռնարկներ: Ցեմենտի գործարանը, եթէ լրացել, շահեկան աղբակ կը լինի Հայաստանի շինարարութեան գործում: Իրենց տեղն ու դերը կունենան և հնգամեակի միւս ձեռնարկները, եթէ երբ և իցէ իրագործուին: Բայց այս բոլորի մէջ աչքը է գաղտնի մի իրատ կարևոր անդամանք. առանձին ուշադրութեան անարկայ են և դրամական ներգործների են արժանանում զբոխաւորապէս այն ձեռնարկները, որոնք անհրաժեշտ են յատկապէս Ռուսաստանի կենտրոնական կարիքների համար: Պղինձը, որ հնգամեակի ծրարելի գլխաւոր մասերից մէկն է, ամբողջապէս ուղարկուել է Ռուսաստան: Բամբակի մեծ մասը գնում է Ռուսաստանի ներսի գործարանները. տուֆի, չեչաքարի արտադրութիւնը նախ և առաջ ի նկատի ունի Ռուսաստանի շինարարութեան պահանջները՝ Դնեպրոստրոյ, Մագնիտոստրոյ և այլն:

Ինականոն պայմաններում այս երևոյթն, ի հարկէ, վնասաւոր չէր լինի երկրի համար. չէ՞ որ արտածւած նիւթերի համարժէք դրամ կամ ապրանքներ կը ներածուէին և, ուրեմն, երկիրը կը շահէր: Խորհրդային պարմաներում գրութիւնը այդպէս չէ. Հայաստանի բնական հարստութիւնները արտահանուած են ոչ իբրև փոխանակութեան կամ վաճառքի նիւթ, այլ իբրև Սորհրդ. Միութեան ընդհանր օգտակարութիւն, առանց փոխաժէքի հատուցման: Հայաստանի ժողովուրդը ոչ միայն չի օգտուում, օրինակ, պղնձի կամ քամբակի արտածումից, այլև վնասուում է՝ պարտաւորւած լինելով ինքնարժէքից ցած գներով կառավարութեան յանձնել բամբակը կամ ողորմելի վարձատրութեամբ աշխատելով հանքերում:

Այսպիսով, Հայաստանի խորհրդային անտեսութիւնը ընթանում է գաղութացման ճանապարհով. Հայաստանը գաղութային շահագործման անարկայ էր ցարական իշխանութեան օրով. նա շարունակում է գաղութային շահագործման անարկայ մնալ և խորհրդային իշխանութեան տակ: Հայաստանի անտեսութեան անմիտքալիտ կողմը այս է. նա չի ծրարւած ու չի զարգացւում ազգային անտեսութեան ստեղծման հաշուով, այլ, որպէս օժանդակ տարր, յարմարեցւած է ծառայելու Ռուսաստանի անտեսութեան կարիքներին: Այսինքն՝ Ռուսաստանի վերաբերմամբ կատարում է նոյն դերը, ինչ որ, օրինակի համար, Մուղանի անտեսութիւնը կատարում է Անգլիայի վերաբերմամբ:

Հայաստանի արդի անտեսութեան մի յատկանշական կողմն էլ գիւղատնտեսութեան կործանումն է: Ինչ ուզում են ասեն բուլշեիկները, անհերքելի փաստը այն է, որ կոլխոզները Հայաստանում մինչև այժմ միայն զարգայման գործոններ են, և որովհետև բուն կոլխոզացուրը շարունակուում է, զարգայում էլ կանգ չի առնում: Գիւղացիական մի ահապի գանգաւ թլւատ գոյութիւն է զարբ այլիս. արհեստական պրոլետարա-

ցումը շարունակուում է արագ թափով: Մի բան, որ հէցը բուլշեիկները ուզածն է. գիւղը առնել կառավարական հակակշիռ տակ, սոժեպացնել երկրի ճարտարաբնաստացումը և բանտրական գանգաւածը երկրում դարձնել քանակով տիրական: Անորմանալի է, այս տեսակէտից էլ որոշ յաջողութիւն նշարուում է. Հայաստանի անտեսական գրութիւնն ու ընակչութեան ընկերային կազմը շատ են փոխւած:

Անկասկած, խորհրդային իշխանութեան յշտմեայ տիրապետութեան ընթացքին և մասնաւորապէս հնգամեակի շրջանում Հայաստանում որոշ նիւթական կառուցումներ տեղի ունեցել են — բացել են ու փայտում են ելեկտրակայաններ ու գործարաններ, կենտրոնական վայրերում շինել են համեստ քանակութեամբ տներ ու հասարակական շէնքեր, և արտաքին այս փոփոխութիւնները մասամբ տպաւորութիւն գործում են հայ ժողովրդի ստեղծարարական կարողութիւններին և Հայաստանի պայմաններին անձանօթ մարդկանց և, մանաւանդ, ինտուրիտի ստմանով ճամբորդողներին կամ կաթողիկոսական ընտրութեան պատգամաւոր գնացող լեւնտներին: Սակայն, Հայաստանի անտեսութեան իրական վիճակն ըմբռնելու համար միայն արտաքին տպաւորութիւնները բաւական չեն. անհրաժեշտ է աւելի մօտից ծանօթանալ երկրի անտեսական ապրումներին, աւելի խորը թափանցել ժողովրդի նիստ ու կացի մէջ, տեսնել գիւղի վիճակը, ականջ դնել գիւղացիութեան ձայնին և, վերջապէս, կարգալ ու հասկանալ բուլշեիկների վիճակագրական թվերը և հայելի առնել անտեսութեան համար գծւած ուղիները: Ի՞նչ համեմատութեամբ են շինուում և ո՞ւմ կամ քնչի՞ն են ծառայում գործարաններն ու ելեկտրակայանները: Ահհրաժեշտ է նաև համեմատել՝ ի՞նչ կը լինէր Հայաստանի վիճակը, ի՞նչ խորք ու ծաւալ կը ստանար հայ ժողովրդի շինարարութիւնն ու տնտեսական գործունէութիւնը, եթէ նա լինէր ազատ: Պէտք է համեմատել, օրինակի համար, ի՞նչ են արել յետպատերազման այս 10—15 տարիների ընթացքում Թիւրքիայից ազատւած ժողովուրդները՝ մի Իրաք, կամ մի Միւրիա, տնտեսական յառաջադիմութեան ի՞նչ աստիճանի են հասել և ի՞նչ աստիճանի է հասել Հայաստանը խորհրդային տիրապետութեան տակ: Ահհրաժեշտ է համեմատել նոյն իսկ հարևան Վրաստանում և Ադրբեյջանում կատարւածները հետ: Եւ միայն նման համեմատութեամբ կարելի է կշռել Հայաստանում կատարւած շինարարութեան փրական ծաւալն ու արժէքը:

Խորհրդային տիրապետութիւնը հնգամեակի տարիներին անհաշիւ զրկանքների ու զոհողութիւնների ենթարկեց Հայաստանի ժողովրդին, քամեց նրա կենսական վերջին հիւթերը, սովի ու թլւատութեան մատնեց երկիրը՝ զեկավարելով միայն զօղիայիզմի կառուցման իր վերացական, դեբ-ցնորական հաշիւներով: Այդ հաշիւները չիբրկանցան. ելեկտրակայաններն ու գործարանները մեծ մասամբ մնացել են թերաւարտ, իսկ ժողովրդական անտեսութիւնը՝ ծայր աստիճանի զարգայման ու քաօսի մէջ: Ահա թէ ինչու բուլշեիկներն այժմ չեն սիրում խօսել հնգամեակի գործած նւաճումների մասին, ոչ էլ զբաղւում են հաւերի ամեքիք հակիթի հաշիւներով: Հայաստանի հաւերը շարպարացրին հնգամեակի յոյսերը:

Ս. ՎՐԱՅՆԱՆ

ԵՐԿՈՒ ԶԱՓ ԵՒ ԵՐԿՈՒ ԿՇԻՌ

«Ճգլեկութիւն» մէջ (28 դեկտեմբեր) կարգում ենք, որ Պորճրդ։ Միութեան Կենտր. Գործադիր Կոմիտէն որոշել է սահմանային սրբազրութիւն կանոնադրել Կազախստանի ինքնավար Հանրապետութեան և Թուրքմենիստանի խորհրդային Հանրապետութեան միջև։ Նոր սահմանագծով Կազախստանի Մանգիստաուտի շրջանի Քարաբուղազի հողամասը կցուում է Թուրքմենիստանի Կրասնոտուրքսկի շրջանին։ Այս նոր փոփոխութիւնը բացատրուում է անտեսական նկատումներով։ Քարաբուղազը, որպէս արդիւնաբերական շրջան իր կազմով աւելի Համապատասխանում է Կրասնոտուրքսկին, որի հետ կապւած է աւելի սերտ կապերով։ Բայց որոշ չափով հաշիւ առնւած են և ազգային պայմանները։ միացուող հողամասերը միեւնոյն ազգային կազմն ունին։

Ուրեմն, սահմանային սրբազրութիւնները զեռ շարունակուում են Պորճրդ։ Միութեան մէջ և երբ նկատուում են տնտեսական կամ ազգային պահանջներ, մի հողամաս դուրս է դնւում մի Հանրապետութեան սահմաններից ու միացուում մէկ ուրիշին։ Կազախստանի և Թուրքմենիստանի պարագան քաջատիկ երեւոյթ չէ՝ կարելի է ցոյց տալ և ուրիշ օրինակներ, ինչպէս Ալեքզէյնի շրջանի նջնատումն ու կցուումը Պորճրդ։ Ռուսաստանին, սահմանագծի ուղղումը Թուրքմենիստանի և Ծածիկիստանի միջև և այլն։

Արդ՝ հարց է ծագում, ո՞ր դէպքում են տեղի ունենում սահմանային սրբազրութիւններ, ի՞նչ է հարկւոր, որպէսզի մի Հանրապետութեան մաս դարձնում հողամաս փոխանցել ուրիշ Հանրապետութեան։ Արդեօք երկրի ազգաբնակչան կա՞մը, ժողովրդի կա՞մը, նրա ինքնորոշման իրաւունքն է ի նկատի առնւում, տնտեսական ազդակներն են վճռական դեր խաղում, թէ՞ ուրիշ հաշիւներ կան։

Առենք Հայաստանի պարագան։ Կան և՛ տնտեսական, և՛ ազգաբնակչան լուրջ պատճառներ, որոնք հարկւորում են բռնութեամբ իւրւած մի շարք հողամասեր վերաբարձնել Հայաստանին, բայց տարիներն անցնում են և սահմանային սրբազրութիւն չի կատարւում։

Այսպէս, օրինակի համար, ինքնավար Ղարաբաղի շրջանը։ Յայտնի է, որ Ղարաբաղում ամիջական, անբաժանելի մասն է կազմում Լեռնահայաստանի, բնական շարունակութիւնը Հայաստանի Հանրապետութեան։ Ղարաբաղ-Չանգեզուր-Դարբաղեանք՝ միեւնոյն ամբողջութեան ընդհանուր մասնիկներն են — մէկ բնութիւն, մէկ տնտեսական վիճակ և միատարր ազգաբնակչութիւն։ Ղարաբաղը ամբողջապէս բնակեցւած է հայերով։ ո՛չ-չայ տարբեր այնտեղ աննշան թիւ է կազմում։ Եւ այդ ազգաբնակչութիւնը մէկից աւելի անգամներ վճռական պահանջ է արտայայտել միանալու Հայաստանին։

Ասել է, և՛ բնական ու ազգաբնակչան հիմքերով, և՛ ժողովրդի կամքը ի նկատի ունենալով՝ Ղարաբաղը պէտք է մտնէր Հայաստանի սահմանների մէջ, բայց չի մտնում ու շարունակում է մնալ Ազրբէջանի մէկ գաւառը։ Ինչո՞ւ։ Այս ազդակող անարարութիւնը և ակնյայտի հակասութիւնը լեռնեան գաղափարաստութեան՝ արդարացուած է տնտեսական նկատումներով։ Ղարաբաղը, առում են բուրձիկները, անհրաժեշտ է Ազրբէջանի խաչնարածների համար. առանց Ղարաբաղի ազրբէջանեան անասնաբուժութիւնը կը կործանուի։ Ղարաբաղը, կրկնում են ուրիշները, տնտեսապէս կապւած է Բազուի հետ. Հէնց գարաբաղիները շուրջ թէլաղրում է կապւած մնալ Ազրբէջանի հետ։

Այս առարկութիւնները, առնւազն, կեղծաւոր են

և հիմնւած չեն իրական տեսչների վրա։ Ինչպէս յայտնի է, Ազրբէջանի խաչնարածները Ղարաբաղին Համահասարակ օգուում են նաև Չանգեզուրի, Դարբաղեանքի և Հայաստանի ուրիշ մասերի արտադրանքներից, ուրեմն, այդ պատճառներով կամքը, Հայաստանի այդ շրջաններն էլ պէտք է կցուեն Ազրբէջանին։ Փաստը ցոյց է տալիս, որ խորհրդային կարգերում, եթէ իշխանութիւնները կամենում են, ոչ մի արգելք չկայ, որպէսզի մի Հանրապետութեան հողամասերից օգուեն և ուրիշ Հանրապետութեան բնակիչները։ Այդ փաստը մենք տեսնում ենք և Հայաստանի ու Վրաստանի միջև. վրացի անասնապահները ազատ օգտագործում են Հայաստանի լեռները արօրը։ (Թէև փակագծի մէջ առենք, որ մեզ յայտնի չեն օրինակներ, որ Հայ գիւղացիներն օգուած լինեն Ազրբէջանի կամ Վրաստանի հողերից)։ Ուրեմն, արգելք չկայ, որ Ղարաբաղը կազմէ Հայաստանի մասը և ազրբէջանից խաչնարածներն իրենց անասունները արածեցնեն նրա արտադրանքում։

Նոյնքան բռնազբոսիկ ու անհեթեթ է և երկրորդ առարկութիւնը. եթէ Ղարաբաղը այսօր, հաղորդակցութեան դժարութիւնների պատճառով, որոշ տնտեսական հաղում ունի գէպի Բազու, վաղը, երբ նոր ճանապարհներ անցկացուեն, նոյնքան հեշտութեամբ կարող է կապուել և Երևանի հետ։ Եթէ այդ հանգամանքն է խորհրդային ներքին սահմանները բնորոշողը, այն ժամանակ ինչո՞ւ միայն Ղարաբաղով սահմանափակել, ինչո՞ւ հետևողական չլինեն և Հայաստանին չի փացնել, օրինակի համար, Ախալքալաքը, որ ոչ միայն ազգային կազմով, այլ տնտեսական պայմաններով էլ աւելի մօտ է Հայաստանին և անմիջապէս միացած է Ծիրիկի հետ. ինչո՞ւ անալքալաքցի հայ գիւղացին փր տնտեսական ու վարչական կարիքներին թաւարարութիւն պիտի տայ հեռուոր թիֆլիսի միջոցով, երբ սաղին իր թքի տակ է Լեռնիսականը։ Նոյն նկատումներով ինչո՞ւ Գանձակի լեռնային հայաբնակ շրջանը չկցել Հայաստանին։

Բայց կայ դեռ աւելին։ Եթէ իրօք պետական շրջաններ կազմելիս խորհրդային իշխանութիւնը ղեկավարւում է տնտեսական գործօններիով, այն ժամանակ ինչո՞վ բացաւրել Նախիջևանի տարօրինակ կացութիւնը։ Ազրբէջանը ոչ մի ընդհանուր սահման չունի Նախիջևանի հետ. բնատնտեսական պայմաններով Նախիջևանը Հայաստանի օրգանական մասն է։ Նախիջևանից Բազու՝ մի քանի օրւայ ճանապարհ է, մինչ Երևան՝ մի քանի ժամ միայն։ Առևտրով, տնտեսական յարաբերութիւններով Նախիջևանը ենթակայ է Երևանին։ Որ կողմից ուղւում էք մօտեցէք, Նախիջևանը պէտք է ընի Հայաստանի մէկ գաւառը, ո՞ր բան, որ Նախիջևանի ժողովրդի շահն էլ է պահանջում։ Բայց և այնպէս, Նախիջևանը Ազրբէջանի մասն է։ Ինչո՞ւ, ո՞ր սկզբունքի հիման վրա։

Երկու շափի ու երկու կշռի այս քաղաքականութիւնը այնքան էլ այդ ծակող, որ ոչ մի բանական բացատրութիւն չի վերցնում, ոչ մի արդարացում չի կարող գտնել։ Երկուսից մէկը. եթէ խորհրդային իշխանութիւնը սահմանները գծելիս ղեկավարւում է արդային գործօնով, Ղարաբաղը պէտք է մացուած լինէր Հայաստանի մէջ, իսկ եթէ գերակշռողը տնտեսական ազդակն է, ապա Նախիջևանը պէտք է լինէր Հայաստանի մաս։ Բայց ոչ այս է, ոչ այն. տնտեսական փաստարանութեամբ Ազրբէջանը ձեռք է գրել Ղարաբաղի

յլա, ազգային սկզբունքով տիրում է Նախիջևանին: Պարզ է, ուրեմն, որ բուլշևիկները համար սկզբունքային նկատումներից դատ եւ ակնի բարձր՝ է գորու են ուրիշ գործօններ: Որո՞նք են այդ գործօնները: Անհրաժեշտ է զիտնալ՝ յանուն ինչի՞ է ջուրթութեան նորագ դարձումը Հայաստանը, ինչի՞ համար է գոհում հայ

ժողովուրդը: Կարո՞ղ է «Թորհրդ - Հայաստան»ը, որ ամէն օր անհաշիւ լուսանք է թափում Դաշնակցութեան գլխին, յստակ ու հասկանալի լեզուով պատասխանել այս հարցերին: Ի՞նչ ունին հայ բուլշևիկները արդարացնելու համար այս երկու չափի ու երկու կտի խայտառակ քաղաքականութիւնը:

ՄԻԻՐԻՈՅ ԱՐՏԱՒԻՆ ԿԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Երկրի մը տնտեսական կացութեան մօտէն ծանօթանալու լաւագոյն միջոցներն մէկը այդ երկրի արտաքին առևտուրի ծանօթութիւնն է: Այդ նպատակաւ այստեղ ամփոփ կերպով կը ներկայացնենք Սուրբիոյ արտաքին վաճառականութեան պատկերը՝ հիմնելով պաշտօնական վիճակագրական տեղեկութիւններու վրա:

Սուրբիան՝ իր աշխարհագրական դիրքի շնորհիւ պատմական կարևոր դեր խաղացած է միջազգային վաճառականութեան մէջ: Ան դարեր շարունակ կամուրջ եղած է Մերձաւոր Արևելքի և Եւրոպայի միջև եւրոպական և ասիական ապրանքներու փոխադրութեան համար: Մասնաւորապէս Պէյրուսի նաւահանգիստը մեծ նշանակութիւն ստացած է Սիտոնի՝ և Քիբի աւերումէն յետոյ, 14րդ դարու վերջերը: Աւելցնենք նաև Կիլիկիոյ անկումը և զբաւումը Այսոս նաւահանգիստի, որը մինչև 1347թ. Կիբրոսի Լուսինեան իշխանութիւններու, Գրանկներու և Վենետիկեան պետութիւններու համար կեդրոն քաղաք մըն էր որպէս կապ Անտիօքի և Հայկական Բարձրաւանդակի բրիտանիայ ժողովուրդներու հետ: Այսօր անկումը փութացուց Պէյրուսի բարգաւաճումը տնտեսական գետնի վրա: Այդ թակահանքին յետոյ, Պէյրուսի առջև կանգ կառնէին եւրոպական վաճառականական նաւերը:

Պատմականօրէն, Սուրբիոյ վաճառականութեան յառաջդիմութիւնը չափով մըն ալ կապած էր իր ունեցած ցամաքային հաղորդակցութեան միջոցներուն: Սուրբիական քաղաքները ամէն կողմէ լաւ ճամբաներով միացած էին: Սիտոնի և Լուովմական տիրապետութեան ժամանակ Սուրբիան հաղորդակցութեան մէջ եղած է մինչև Սեւ Ծովի, Միջագետքի, Պարսկաստանի, Պաղեստինի, Եգիպտոսի և Արաբիոյ հետ: Կանոնաւոր լսնուղիներու շնորհիւ, հեռուոր Հնդկաստանը տեւականօրէն յարաբերութիւն ըրած է Միջերկրականի ազգութիւններու հետ: Բայց, օսմանեան տիրապետութիւնը փր աւերումի քաղաքականութեամբ քանդեց նաև բանուկ ճամբաները, կամուրջները և հետզհետէ կտրեց հաղորդակցութիւնները: Անապահովութիւնը մէկ կողմէն, կողպուտաները միւս կողմէն զարդիցուցին վաճառականներու երթևեկը: Որով Սուրբիոյ վաճառականութիւնը կարեցաւ արտաքին եկամուտներէ:

Եւրոպացիները տասնըրկներորդ դարու մէջ սկսան հետաքրքրել Սուրբիոյ քաղաքական և տնտեսական կեանքով: Նափուլոնի արշաւանքը դէպի Լիբանան և այլա Լիբանանի ինքնավարութիւնը առիթ տւին որ,

յատկապէս Փրանսական դրամատէրներ, իրենց աչքերը դարձնեն դէպի սուրբիական հողերը: Եւ անկէ յետոյ է որ Սուրբիան մտաւ տնտեսական յառաջդիմութեան ճամբուն մէջ, մանաւանդ երբ ինքնակամ թակահանքուն ձեռնարկեցաւ երկաթուղիներու շինութեան և իրար ետեւէ բացուցան Պէյրուս-Տամասկոս (140 քիլոմէթր), Տամաս-Մզէրիպ (102 քիլոմ.), Թահաբ-Համա և Հալէպ (331 քիլոմ.), Հոմա-Քիբիոլի (102 քիլոմ.) ու մի քանի ուրիշ երկաթուղաճեք:

Օսմանեան կայսրութեան ժամանակ երկաթուղիի տեսակէտով ամենարախտաւոր շրջանը կարելի էր համարել Սուրբիան, որ 150,000 քառ. քիլոմ. տարածութիւն ունի և որուն 2/3ը անապատ ըլլալով հանդերձ, մօտ 800 քիլոմէթր երկարութեամբ երկաթուղաճեք կը պարունակէ՝ ստանց հաշուելու Պաղատաթի դէծը: Այս երկաթուղիները այսօր լիութի բաւարարութիւն կուտան երկրի թէ վաճառականութեան և թէ այլ պէտքերուն:

Անոնք որ առիթը չեն ունեցած Սուրբիայի ժողովուրդը մօտէն ճանչնալու, կը կարծեն թէ, սուրբիացիներն ալ թուրքերուն պէս անընդունակ են առևտրական ասպարէզի մէջ: Բացարձակապէս կը սխալին այս տեսակ մտածողները: Սուրբիացին ընդունակ է թէ առևտուրի և թէ արհեստանէրու մէջ: Սուրբիացի արհեստաւորները կը պարտատեն Տամասկոսի, Հոմսի, Համայի, Հալէպի յայտնի մետաքսեղէնները, կերպասները, կտանները և մանաւանդ պղնձեղէնները: Զարտարուեստը այնքան յառաջդիմած է որ այժմ կարող է մրցել եւրոպական արտադրութիւններու հետ: Առևտուրի մէջ ալ սուրբիացի վաճառականը նոյնքան ճարպիկ է:

18րդ դարէն սկսեալ, Լիբանանի և Սուրբիոյ վաճառականութիւնը սերտ կապեր հաստատած է մէկ կողմէն Արապայի: Իսկ միւս կողմէն Միջագետքի, Պարսկաստանի և Հնդկաստանի հետ՝ կատարելով տեսակ մը միջնորդ փոխադրողի դործը: Սուրբիոյ նաւահանգիստները ոչ միայն ապրանք կը ստանալին վերոյիշեալ երկիրներու համար, այլ և կը ներածէին ամբողջ Արևելեան Անատոլիայ, Կիլիկիոյ և Մուսուլի համար: Դեռ Պոլիս-Պաղատա զիճը չլինած, այդ շրջաններու համար Պէյրուսի և Ալեքսանդրէթի նաւահանգիստներն ակնի մօտ էին: Միւս կողմէն Պէյրուս-Հալէպ երկաթուղին դիւրեց ցերեկ ապրանք կը փոխադրել Տիգրանակէրտի, Ուրֆայի և Այնթապի շրջաններու համար: Այս բոլոր դործաւնութիւնները կը կատարէին մաս մը եւրոպացի յանձնակատարներու և

մնացածը ամբողջովին սուրիացի, լիբանանցի վսլամ և քրիստոնեայ առևտրականներու միջոցու:

Ընդհանուր Պատերազմէն առաջ, փոխանակած ապրանքներու դոմարը կը հասնէր չուրջ 500 միլիոն ոսկի Փրանքի: Եւրոպական երկիրներէն առաջին կարգի վրա կուգար Անգլիան իբրև արտածող և ներածող: Անգլիայէն յետոյ կուգային Ֆրանսա, Աւստրիա-Հունգարիա, Գերմանիա, Իտալիա և այլն:

Այսօր Սուրիան իր արտաքին վաճառականութիւնը կը կատարէ չորս զվարար նաւահանգիստներու՝ Ալեքսանտրէթի, Լաթաքիոյ, Թրիփոլիի և Պէյրութի միջոցաւ:

Ալեքսանտրէթը՝ Հայոց Մոցի վրա, փոքրիկ նաւահանգիստ մըն է: 1912ին, քաղաքը Պաղտատի երկաթուղիով միացած է Հալէպին: Նաւահանգիստը 1890ին 70 միլիոն Փրանքի գործառնութիւն ունեցած է, որուն 34 միլիոնը ներածում, իսկ 36 միլիոնը արտածում: Ատեն եղած է որ դործառնութիւնը բարձրացած է մինչև 96 միլիոն Փրանքի: Հետագային՝ 1900—1910 թւականներուն Ալեքսանտրէթի էլեմուտը զգալի կերպով իջած է, միջին հաշուով տարեկան 50 միլիոն Փրանքի: Այս նապուտին պատճառը Ռահեա-Համա և Թրիփոլի-Հոմս գծերու բացումն է 1906ին, ինչպէս նաև Պէյրութ-Հալէպ գծի միացումը և Պոլիս-Պոզանթին-Ատանա-Հալէպ Պաղտատի գծի գործի անցիլը: Ալեքսանտրէթի այնքան քանուկ նաւահանգիստը առաջին գոհը եղաւ երկաթուղիներու:

Լաթաքիոյ նաւահանգիստը, մայրաքաղաքը միաժամանակ ալտուիթներու կառավարութեան, երկրորդական դեր ունի արտաքին վաճառականութեան համար: Հակառակ իր մեկուսացած դիրքին 1890ին 10 միլիոն Փրանք արժողութեամբ ապրանք փոխանակած է:

Թրիփոլիի նաւահանգիստը առևտրական նւազ կուպեր ունեցած է Եւրոպայի հետ, որովհետև նախ՝ Պէյրութը շատ մօտ է, յետոյ՝ նաւահանգիստ չունենալու պատճառով մեծ նաւեր չեն հանդիպեր: Ասոր հետ մէկտեղ, Թրիփոլիի տարեկան գործառնութիւնը երբեմն հասած է մինչև 40 միլիոն Փրանքի: Սոյն գործառնութիւնը կը պարտի մասամբ Թրիփոլի-Հոմս-Հալէպ երկաթուղագծին:

Սուրիոյ ամենամեծ նաւահանգիստը Պէյրութն է, որու արտաքին առևտրական գործունէութիւնը կը սկսի 15րդ դարէն առիւն: Փրանսական դրամապլուտով շինւած նաւահանգիստ մը, որու մեծութիւնն է 23 հեկտար և խորութիւնը 8 մէթր: Ընդհանուր Պատերազմէն առաջ, 1900—1910 թւականներուն փոխանակութեան ընդհանուր դոմարը հասած է 140 միլիոն Փրանքի:

Պէյրութի ներածումները եղած են Փրանսայէն, Եգիպտոսէն, Թիւրքիայէն, Անգլիայէն, Աւստրիայէն, Գերմանիայէն և այլն: Դէպի Սուրիա ներածւած է քարէլը, շաքար, ատաղձ, ներկ, զմիական արտադրութիւն, դեղորայք, բրինձ, կերպասեղէն, երկաթ, պղինձ, կաշի և զանազան չինանրութիւն: Իսկ Պէյրութէն արտածւած է բուրդ, ձիթաիւղ, պտուղ, ձի, շորի, այծ, արտիփ, նարինջ, չամիչ, մորթ, օճառ: Բացի արտաքին վաճառականութեան, Պէյրութը՝ Սուրիոյ տեղական վաճառականութեան համար ալ կարևոր

կեդրոն մըն է: Այսպէս, Տամակուսի, Համայի, Հոմսի, Հալէպի մէջ պատրասուած կերպասեղէններն ու մետաքսեղէնները կը մեծուին Պէյրութի մէջ:

Ձխարազարէն յետոյ, Պէյրութի նաւահանգիստը անկանոն վիճակի մէջ կը գտնէր: Իտալական-թրքական պատերազմէն ի վեր ընկղմած թրքական մարտանաւեր կային, որոնք կարգիլէին ազատ շարժումը նաւահանգիստի մէջ: Փրանսական ընկերութիւնը հետզհետէ մտադրէ տաւ նաւահանգիստ և ըրաւ բազմաթիւ շինութիւններ նաւամատոյցի եզերքը: Շինեցան մագաստան հսկայ մթերանոցներ արդիական ձևերով: Իսկ նաւահանգիստի հիւսիսային թեւը բաւականին լայնացրին: Հոս կառուցեցան մագաստան մթերանոցներ և վաճառականներու պահեստներ: Այս թեւի վրա կը գտնուի նաև ջրատաւանակային կայանը: Մրազի մը կայ նաւահանգիստի երրորդ թեւ մըն ալ շինելու համար: Սոյն թեւը պիտի իջնայ դարձեալ Պէյրութի հիւսիսէն՝ Գարանթիմայի կողմէն և պիտի ունենայ մօտ մէկ զիլմէթր երկարութիւն: Այս ծրագրի իրականացումը երկու կամ երեք տարւայ կը կարօտի, և կրնայ սպասուիլ Հաղարաւոր գործառնութեան աշխատանք:

Պէյրութի նաւահանգիստի ընդլայնումը մեծ նշանակութիւն ունի Սուրիոյ տնտեսական կեանքի զարգացման համար: Այս օրերս բանակցութիւններ կը կատարուին Պարսկաստանի հետ՝ Պէյրութը պարսկական ապրանքներու համար ազատ նաւահանգիստ դարձնելու: Շատ քնական է որ նման ծրագրի մը յաջողութիւնը պիտի սպասուի կրկնակ առևտրութիւններ թէ՛ Պէյրութ քաղաքի և թէ՛ ողջ Սուրիոյ համար: Առաջին գործը պիտի ըլլայ ընդլայնել Պէյրութի նաւահանգիստը, որովհետև անդիլացիները մեծ աշխատանք կը թափեն Հայֆա նաւահանգիստը կատարելագործելու համար:

Անուրանալի է որ Հայֆան լրջօրէն մրցակցութեան մէջ է Պէյրութի հետ, որ աւելի ևս սուր հանգագանք պիտի առնէ եթէ Հայֆա-Պաղտատ երկաթուղագիծը բացուի: Որով սուրիական նաւահանգիստները պիտի կորսնցնեն Միջագետքի, Պարսկաստանի թրանզիթի գործունէութիւնը: Այնպէս որ Պէյրութի ազատ նաւահանգաւ ծրագիրը կարող է բաւական մեծ դեր խաղալ քանի ղեռն է բացւած Պէյրութ-Հայֆա գիծը:

Վաճառականութեան զարգացման տեսակէտով կանուր են և Հաղորդակցութեան միւս միջոցները: Փրանսական բանակի դրամումէն յետոյ մեծ կարեւորութիւն տրեցաւ խնուղիներու նորոգման, որը ճամբաներու և նոր կամուրջներու կառուցման գործին: Տեղական կառավարութիւններն ալ իրենց հերթին կարեւոր դոմարներ յատկացուցին՝ երկրին տալու համար արդիական ճամբաներ: Պէյրութ-Տամակուս գիծը 110 զիլոմէթր ամբողջութեամբ ամփայլ եղած է: Հետզհետէ ամփայլ եղած են Պէյրութ-Սուր ճամբան և Պէյրութ-Թրիփոլի գիծն ալ մօտ տասնին կը լրանայ: Լիբանանի կեդրոն ամառանոցները նոյնպէս ամփայլ ճամբաներով միացած են իրարու:

Բայց և այնպէս Հաղորդակցութեան դելուրութիւններով օժտւած Սուրիան չունի վաճառականական այն գործառնութիւնները որ ունէր մօտաւոր անցեալին մէջ: Մանաւոր ներկայիս, թրանզիթի գործը չափազանց պակաս է: Անաւտուր, օրինակ, որ առաւելա-

պէս Հալէպէն կը փոխադրէր եւրոպական արտադրութիւնները, ներկայիս ոչ մէկ յարաբերութիւն ունի Սուրիոյ հետ: Ընդհանրապէս, Անատոլոս Սուրիոյ կը ծախէ մեծ քանակութեամբ ծխախոտ, ոչխար, կով, բրինձ: Նոյնպէս և հիւսիսային Միջագետքը, լատիկապէս Մուսուլի նահանգը, Ալեքսանտրէթի և Հալէպի վայրով կը ստանար փր ապրանքները: Պաղտատի շքր վանն ալ մաս մը Սուրիայէն ապրանք կը գնէր: Ընդհ. Պատերազմէն ասդին Իրաքը գրեթէ դադարեցուցած է նախկին առևտուրը, միայն փոքրիկ գործառնութիւններ կունենայ Սուրիոյ հետ՝ միշտ իրեն պահելով ներածուսի կէտը: Բնական է որ Մեծն Բրիտանիան իր քաղաքական ազդեցութեան շնորհիւ պիտի ամրացնէ նաև անտեսական շահերը՝ յարմարեցնելով Հնդկաստանի շահերուն: Մասնաւոր որ Իրաքի մէջ գործածուած դրամն ալ հնդկական արծաթ թուպին էր, իսկ այժմ Իրաքի նոր դրամները կապուած են անգլիական դրամին, որով Իրաքի համար սթրիքին ինկած վիճակի մէջ աւելի ձեռնտու է Անգլիոյ հետ առևտրական կապ պահելը, քան թէ Ֆրանսայի կամ Իտալիոյ հետ, որոնց դրամները աւելի սուղ են:

Պաղեստինը և Եգիպտոսն ալ ունեցած են առևտրական սերտ յարաբերութիւններ Սուրիոյ հետ: Այսօր ալ Պաղեստինը Սուրիոյ ստալին յաճախորդը կը հանդիսանայ. տարեկան մօտ չորս միլիոն սուր. ոսկիի ապրանք կը գնէ Սուրիայէն և մէկ միլիոնի չափ ալ կը ծախէ:

Ընդհանուր ամամբ Սուրիոյ նախկին շուկաները կամաց-կամաց կը հեռանան, որովհետև ամէն երկիր կը ձգտի ինքնամփոփել և դոտանալ իր ազգային արտադրութիւնով:

Համաշխարհային Պատերազմէն յետոյ, բոլոր երկիրներու մէջ դրամ կար, գործ կար և աշխատող ձեռքերը առատօրէն կը վարձատրէին: Սուրիան ալ, ի հարկէ, օգտուեցաւ սկիզբի օրերու այդ տնտեսական վերելքէն: Ամէն վաճառական, արհեստատր թէ պաշտօնային, ինչպէս կըսեն, դրամ կը շուռաքէր: 50-100 հազար հողիոց Փրանսական, անգլիական բանակը երկրի գանազան կողմերը առևտրական ընդհանուր եռուզեռ կը ստեղծէր: Անգլիական զինուորներու քաշուելէն ետքը մնացին Փրանսական զինուորները, որոնց վրա Ֆրանսան առատ դրամ կը ծախար, որովհետև Գերմանիան իր կարգին կը վճարէր հաստացումները: Փաստօրէն Սուրիոյ ժողովուրդները կօզուէին Ֆրանսայի ելեմտական կայութիւնէն, մասնաւոր որ բանակի բոլոր կարիքները կը գնէին տեղուց վրա: Միևս կողմէ Փրանսական հոգատար էլիտանութիւնը նիւթական մեծ օժանդակութիւններ կընէր երկրի առողջապահական, կրթական, հանրային շինութիւններու, ճամբաներու նորոգութեանց և հասարակաց բարենպաստակ ձեռնարկները զաշխարհուը համար:

Թիւրքերն ալ քիչ հարատութիւն չթողուցին Սուրիոյ մէջ: Թրքական և գերմանական հրդ զօրաբանակը անհաշիւ ուտեստեղէն, հաղուստեղէն, դրամ ձգեց և փախաւ հայկական լեզէոնի վրէժխնդրութեան չեթարկելու համար:

Դրամի առատութիւնը ուժղին գորկ սուր երկրի

չինարարութեան: Յատկապէս Լիբանանը իր նոր ասֆալթէ ճամբաներով, ամառանոցներով, վիլաններով, հակայ չէնքերով Եւրոպայ կը յիշեցնէ: Պէյրութ քաղաքը տասը տարւայ ընթացքին բոլորովին փոխուած է: Եւ դրամները կը վերածուին չինքերու: Տամասկոս, Հալէպ նոյնպէս կը վերաշինին: Այս բոլորը կը կատարուին Եւրոպայէն ստացուող ապրանքով: Տարեկան մօտաւորապէս 10 միլիոն սուր. ոսկիի չինանքներ կը ներածուին, որով Սուրիայէն դրամը կը քաշի զէպի Եւրոպա: Փոքրիկ Լիբանանի մէջ, ուր 800-000 բնակիչ կայ, մօտաւորապէս 10-000 ինքնաշարժեր կը շրջին: Այս ինքնաշարժերուն բոլոր կարիքները կը հողագին և ևրոպական արտադրութիւններով: Ժողովուրդը հետըզհետէ կը զգայ որ դրամը կը փախի Սուրիայէն:

Արդ, մէկ կողմէ սուրիացիներու չինարարական պահանջները, միևս կողմէ տեղական ճարտարաբանութիւնը և հողազորութեան արդիւնաբերութեան անբաւարարութիւնը, պատճառ կը դառնան որ Սուրիոյ ներածուսները՝ արտածումներէն աւելի շատ ըլլան: Հետեւեալ պատկերէն պիտի տեսնենք տարբերութիւնները.

	Ներածում	Արտածում
	Սուր. ոսկի*)	սուր. ոսկի
1925	48-779-910	22-959-551
1926	63-357-034	27-240-972
1927	64-123-277	27-389-927
1928	66-002-011	26-741-705
1929	72-998-401	34-237-523
1930	63-526-308	30-616-083
1931	50-504-858	20-891-666

Եթէ վերջին երեք տարիներու բացը գումարելով միլիոնը գտնենք, կունենանք 31-000-000 սուր. ոսկի: Այս հաշուով, Սուրիան մօտաւորապէս 6 միլիոն հնչիւն ոսկիի կորուստ կարճաժամգրէ ամէն տարի: Նոյն թիւերէն կը տեսնենք, բացի գումարը հետզհետէ կը պակսի:

Ո՞ր երկիրներու հետ առևտրական գործառնութիւններ կընէ Սուրիան, ի՞նչ էն անոր ներածման և արտածման թիւերը ըստ երկիրներու:

	ՆԵՐԱԾՈՒՄ		
	1929	1930	1931
	սուր. ոսկի	սուր. ոսկի	սուր. ոսկի
Ֆրանսա	10-154-218	9-721-350	6-967-771
Մ. Նահանգներ	8-586-153	4-601-203	3-373-059
Անգլիա	7-962-829	7-147-589	6-156-889
Իտալիա	6-119-205	5-308-485	4-265-950
Թիւրքիա	4-922-281	4-963-857	4-051-850
Ռումանիա	3-894-979	3-231-341	3-112-986
Պելճիզա	3-650-915	3-705-099	3-300-493
Գերմանիա	3-229-585	3-092-309	2-994-270
Պարսկաստան	2-957-398	3-622-481	376-069
Եգիպտոս	2-363-876	2-048-827	1-583-897
Աւստրալիա	2-306-564	252-854	—
Միչագուտ	2-183-082	2-160-874	1-837-651
Սիւ-Սյուպի	1-874-202	1-554-668	1-682-325
Հնդկաստան	1-786-109	1-443-632	1-211-380
Ճափոն	1-613-328	2-621-537	2-977-263
Պաղեստին	1-407-264	1-238-365	1-062-259
Աւստրիա	949-857	1-076-400	784-970

*) Սուրիական ոսկին կարծէ 20 ֆրանք:

Հոլանտա	585-221	489-909	412-122
Անդր-Յորդանան	399-091	220-377	141-011
Զուրիգերիա	381-408	428-509	333-741
Կիպրոս	269-409	130-857	89-238
Շուէտ	157-456	174-897	113-298
Յունաստան	130-200	103-069	106-091
Հիմազ	107-031	97-521	43-308
Ենկույաւ	—	—	535-120
Զանազ. երկիր	5-006-840	4-090-248	2-991-848
Գումար՝	72-998-401	63-526-308	50-504-859

ԱՐՏԱՆՈՒՄ

	1929	1930	1931
սուր. ոսկի	սուր. ոսկի	սուր. ոսկի	սուր. ոսկի
Պաղեստին	4-321-908	4-099-425	3-945-695
Թուրքիա	1-380-473	754-565	954-412
Միջագետք	1-265-154	921-795	1-450-263
Անդր-Յորդանան	1-123-503	1-004-797	667-939
Կիպրոս	78-498	98-297	54-024
Մ. Նահանգներ	4-472-239	1-354-241	5-053-340
Եգիպտոս	3-694-776	4-618-709	1-890-109
Յրանաս	3-280-047	4-332-800	1-801-781
Իտալիա	1-756-742	1-421-812	1-240-638
Անգլիա	1-093-884	917-029	1-181-143
Յունաստան	990-784	276-491	196-677
Կիբրանիա	759-997	466-559	461-889
Հիմազ	396-541	463-396	126-584
Պելճիզ	118-591	300-115	360-646
Հոլանտա	103-544	575-009	74-607
Պարսկաստան	96-312	80-664	331-761
Աւստրալիա	13-517	13-064	—
Աւստրիա	6-730	65-401	7-511
Չուիցերիա	4-372	6-023	4-026
Նուսմանիա	2-733	3-944	3-563
Լեդիաստան	1-849	2-247	10-302
Չեխ-Սլովակ.	1-003	2-342	2-486
Շուէտ	240	384	—
Հիպոն	—	6-949	29-257
Զանազ. երկիր	542-637	879-957	993-013
Գումար՝	25-506-079	22-663-905	20-891-666

Ինչպէս կը տեսնենք, որպէս ներածող առաջին տեղը կը բռնէ Յրանասն և այդ հասկնալի է, որովհետև մեծ թւով Ֆրանսական ընկերութիւններ կան, որոնք իրենց գնումները ընկանաբար պիտի կատարեն Յրանասային: Յետոյ կայ Ֆրանսական բանակը, որը իր կարգին գնումները կ'ընէ Յրանասային:

Յրանասային յետոյ կուզան Անգլիա, Իտալիա, Ամերիկա, Թիւրքիա, Բուսանիա, Գերմանիա, Եգիպտոս և այլն: Իսկ արտածումներու համար, առաջին տեղը կը գրաւեն Միացեալ-Նահանգները, յետոյ՝ Պաղեստին, Եգիպտոս և այլն յաճախորդները եղած են Սուրիոյ վաճառականութեան:

Վերջին երեք տարիներու միջինն առնելով հետեւեալ երկիրներու արտաքին վաճառականութեան տարբերութիւնը վերենց շահ ապահոված է՝ Անգլիա՝ 6-035-000 սուր. ոսկի, Յրանաս՝ 5-809-000, Իտալիա՝ 3-758-000, Թիւրքիա՝ 3-616-000, Բուսանիա՝ 3-409-000, Պելճիզ՝ 3-260-000, Գերմանիա՝ 2-542-000, Ճափոն՝ 2-392-000, Պարսկաստան՝ 2-132-000, Ամերիկա՝ 1-900-000, Չեխ-Սլովակ.՝ 1-700-000, Հնդկաստան՝ 1-475-000 և Միջագետք՝ 850-000:

Սուրիոյ արտաքին առևտուրը շահը գոյացած է բացարձակապէս զբացի երկիրներու փոխանակութենէն: Դարձեալ երեք տարւայ միջին գումարը.

Պաղեստին 2-886-000 սուր. ոսկի, Եգիպտոս՝ 1-402-000, Անդր-Յորդանան՝ 678-000, Հիմազ՝ 246-000 սուր. ոսկի:

Այս թիւերուն մէջ մասնաւորապէս ուշադրաւ է ձգտիմի ներածումներու յաւելումը վերջին տարիներուն, որ՝ յառաջ եկած է մետաքսեղէններու ներածման և առեւի չարած աւած է Սուրիոյ մետաքսեղէնի ճարտարարեւտին: Անցեալ ամառ ժողովուրդը սաստիկ զայրացած, յատկապէս Հալէպի և Տամասկոսի մէջ հսկայ ցոյցեր կազմակերպեց արգիլել տարու համար ճարտական արտադրութիւններու մուտքը: Բարձր Գոմիստութեան տնտեսական ճիւղը ընկելով կացութեանը՝ ընթացք տուաւ համաժողովրդական բողոքին և անմիջապէս աւելցուց մետաքսեղէններու մաքսային տուրքը:

Ամիսի գազափար մը տարու համար Սուրիա ներածած և Սուրիայէն արտածած ապրանքներու տեսակներու և անոնց արժէքներու մասին կուտանք հետեւեալ ցուցակը.

1 9 3 0 — Ի Ն		
Ներածում	Արտածում	
սուր. ոսկի	սուր. ոսկի	
Ողջ կենդանի	3-563-796	1-763-627
Կենդանական արտադրութ.	2-962-067	5-037-110
Արմտիք	2-787-157	2-080-631
Պտուղ, բանջարեղէն	1-998-093	2-739-456
Աւարք, թէյ, շաքար	3-569-855	348-884
Երկաթաքար, բոսփոր	462-116	76-008
Խմիչիք և պիֆոլ	579-765	11-257
Իսկ և բուսական նարպ	385-523	716-243
Կաշի, գործ. մորթ	1-001-048	330-161
Ատաղձ և փայտեղէն	2-283-008	421-376
Թուղթ և թղթեղէն	1-421-480	93-887
Բամպակ և բամպակեղէն	10-552-997	2-260-893
Կանեփ	611-518	276-573
Կերմամ, մետաքս	1-658-341	238-309
Բրոնզեղէն, դերման, կոնակ	6-480-831	461-737
Հագուստեղէն	1-067-114	1-374-138
Չաւաչուկ	1-720-755	713-029
Քարիւղ, պէմզիմ, իսկ	3-736-925	140-982
Յիւնէթ և շինութեան նիւթեր	2-567-066	31-459
Նրկաթ, երկաթեղէն	3-763-053	127-756
Պղինձ	442-933	119-081
Կապար	74-795	2-137
Ջինկ, անագ	62-854	1-656
Արծաթ, ոսկի և բանկազիմ մետաղներ	102-115	2-204-637
Զանգաւ մետաղներ	1-355-340	2-830
Մեքենաներ	79-294	113-151
Ինճնաշարժ	2-826-202	146-439
Ժամացոյց, ճաւազի գործիքները	249-338	6-417
Գիտօրնայիք, անուշահոտ	325-656	190-958
և փիւրկան արտադրութ.	2-090-092	142-733
Զանգաւ նիւթեր	456-865	468-752
Գումար՝	63-526-308	22-663-905

Սուրիոյ գլխաւոր նաւահանդիսանքները նաւային հետեւեալ գործունէութիւնը ունեցած են.

ՊէՅՐՈՒԹ				
տարի	նաւ	տարադուր. բօն	ներածում արժէքը սուր. ոսկի	արտածում արժէքը սուր. ոսկի
1927	834	1-755-030	40-877-434	8-426-394
1928	886	1-843-563	44-451-578	11-304-016
1929	877	1-990-636	47-984-913	7-770-534
1930	866	1-948-142	42-497-151	9-326-334

ԹՐԻՓՈՒԽ

1927	338	653-733	4-670-838	1-536-554
1928	381	682-136	4-572-514	1-327-643
1929	387	717-940	4-975-587	1-724-354
1930	447	837-818	3-188-317	2-527-504

ԱԿՏԻՍԱՆՏՐԻՓ

1927	339	555-321	7-919-730	8-523-854
1928	338	601-179	6-569-092	7-876-103
1929	376	609-638	9-357-391	9-671-836
1930	368	703-825	8-052-720	5-071-230

ԼԱՌԱՔԻԱ

1927	87	127-211	399-162	619-147
1928	95	149-163	464-667	314-439
1929	82	137-032	547-420	548-074
1930	111	174-290	515-686	555-648

Այս թիւերէն կը տեսնենք որ Սուբիոյ ներածումները սկսած են զգալիօրէն պակսիլ: Ատոր պատճառները կարելի է բացատրել անով որ ապրանքներու գինիքը

ինկած են և սպասուածի պահանջն ալ կը նուազի: Շնորհիւ տեղական կառավարութիւններու և Բարձր Գործերութեան ջանքերուն, տեղական ճարտարաբանները կը զարգանայ և Հողային արտադրութիւնն ալ կաւենայ: Նոյն թիւերը ցոյց կուտան նաև թէ տնտեսական ինչ բարձր կարելիութիւններով օժտուած է Սուբիան և ի՛նչ ուղղութեամբ պիտի զարգանայ անոր կիսիքը:

Սուբիական դրամը կապուած ըլլալով Ֆրանսական Փրանքին, ներկայիս դրամական տագնապ գոյութիւն չունի: Ամբողջ Սուբիոյ մէջ շրջանառութեան հանուած դրամի զուտարը կը հասնի մօտ 13-000-000 սուբ. ուսի կի, որուն 1-500-000ը արծաթ և պղինձ դրամներ են: Վերջերս, նախկին օսմանեան մէծիտիքներու և փոքր դրամներու ջնջումով, արծաթ դրամներու քանակը աւելցաւ: Ֆրանսական ընկերութիւններ աւելի և աւելի կը տեղաւորեն իրենց դրամապլուրները, որոնց ընդհանուր գումարը կը հասնի մօտ 500 միլիոն Փրանքի:

Սուբիոյ տնտեսական վերելքի համար երկու կարևոր ազդակներ պէտք են. նախ Հողամշակութեան զարգացումը, ապա տեղական ճարտարաբանութիւնը անփոփոխ: Այս երկու ճիւղերին մէջ ալ Սուբիոյ հայ գաղթականութիւնը կոչուած է շուշափիլի դեր կատարելու:

Գ. ՍԱԶՅԵԱՆ

ԱՆԳԼԵՒՊԱՐՄԻԿ ՎԷՃԸ

Անգլիացորդի վէճը. Անգլո-Պերժըն նաւթային ընկերութեան շուրջը շատ հեռու է տեղական, միայն տնտեսական երևոյթ լինելուց և գերազանցապէս քաղաքական ընդթէ կըրտ: Այն փաստը, որ անգլիացիք Հարցը Հասցրին մինչև Ազգերի Լիգա, միև կողմից, այն հանգամանքը, որ կառավարական դիրքերից հեռացեց Թէմուրթաչի պէս աչքի ընկնող մի անձնատրութիւն՝ ապացոյց են, որ արտաքինապէս տնտեսական պիտակի տակ զարգացող վէճը ունի խորունկ քաղաքական աստուտ:

Ինչո՞ւն է վէճի էությունը:

Երեսուն մէկ տարի առաջ, 1901թ., աւստրալիացի Ռիլիքը Նոթա Գ'Արսին, օգտուելով պարսից արբուսիքի ներթափան նեղ կացութիւնից՝ 100 հազար Փրանք վճարելով և 100 հազար Փրանքի շահաբաժին ու զուտ Հասցիից 16% պետութեան յանձնելու իրաւունքով աւելի էր, բացի Հիւսիսային Հինգ նահանգներից, Պարսիկաստանի բոլոր նաւթաբեր Հողերի շահագործման իրաւունքը: Նախնական հետազոտութիւնները դրական արդիւնք չուէին, դ'Արսին կորցրեց աւելի քան հինգ միլիոն Փրանք և արդէն յուսահատած պատրաստուեւ էր ձեռք քաշել, երբ Շուտաէրի շրջանում, Պարսից ծոցի մօտ 140 մղոն հիւսիս, երևան եկան Հարուստ նաւթային շտարաններ: Դ'Արսին ամէն կողմից ստացաւ նպաստաւոր առաջարկութիւններ, բայց հակառակ դրան որոշեց իր նաւթային ձեռնարկութիւնները զննել բրիտանական հակալուրի տակ: Նա ներթափան անկացութիւն ստացաւ «Երբան Օյլ» ընկերութիւնից և ձեռնարկեց նաւթի արտադրութեան: 1909թ. «Երբան Օյլ»ը Հինգ դրեց Անգլո-Պերժըն ընկերութեան, որի ձեռքն անցաւ Պարսիկաստանի նաւթային Հողերի օգտագործումը: Անգլիական կառավարութեան քաղտնի պահելու թեմամբ Անգլո-Պերժընը վերակազմեց Պարսիկաստանի նաւթահողերի օգտագործման գործը, անցկացրեց մինչև Պարսից Սոցը տանող նաւթախողովակ՝ 145 մղոն երկարութեամբ և Արադանում Հիմնեց նաւթալիչ գործարաններ: Միևնոյն ժամանակ, Անգլիա-

յի ծովային նախարար Ռիչմոնդը Ջորջիոյ յանձնարարութեամբ կատարեցին նոր հետազոտութիւններ, որոնք ցոյց տուին, որ պարսիկական նաւթահողերը այնքան ընդարձակ են և հարուստ, որ կարող են Անգլիայի ամբողջ նաւթային պահանջը բաւարարել: Նաւթահողերի տարածութիւնը, որ հասանք է Ֆրանսոյն և Գերմանիայի տարածութեան միասին առած, աշխարհապահանջը դարձակ նաւթային շրջանի է հանդիսանում, նաւթը աւելի բարձր որակ ունի և, օրինակ, երկու անգամ աւելի ընկնել է տալիս, քան ամերիկեան նաւթը: մեքսիկեան նաւթից էլ աւելի հարուստ է:

Չբըջիլը կամենալով բրիտանական նաւատորմիցը պատել իր ըստների կախումից՝ Անգլո-Պերժընի հետ կիւրեց զադտնի համաձայնութիւն, որով Պարսիկաստանի նաւթահողերը փաստօրէն անցնում էին անգլիական կառավարութեան ձեռքը: Այդ համաձայնութեամբ անգլիական կառավարութիւնը ձեռք էր բերում 2-200-000 ստերլինի բաժնեթղթեր: Անգլո-Պերժըն ընկերութիւնը, որով 2000 ձայնի մեծամասնութիւն էր շահում ընկերութեան գործերի մէջ: Իր կազմով ընկերութիւնը շարունակելու էր գործել անկախ, բայց կառավարութիւնը նշանակելու էր երկու ներկայացուցիչ — մէկը ծովային, միւսը երեւոյթական նախարարութիւնից, որոնք հակալուրի պիտի ենթարկէին ընկերութեան գործունէութիւնը: Իր Հերթին, ծովային նախարարութիւնը պայման էր կնքում, որով պարտաւորում էր 30 տարւայ ընթացքում անգլիական նաւատորմի ճամար պահանջուած նաւթը զննել ընկերութիւնից:

Չբըջիլի այս քայլը հազարից դժգոհութիւն առաջ բերեց Անգլիայի մամուլում և խորհրդարանական շրջաններում: Հետազոտողներն է, որ համաձայնութեան խտտ հակառակորդներից մէկն էր այսօրուս վարչապետ Մակդոնալտն էր: Անգլիական հանրային կարծիքը վախ էր յարստում, որ համաձայնութեան վաւերացումը աւելի կը տայ ընդհարելու Ռուսաստանի հետ և բարդութիւններ կը ստեղծէ բրիտանական քաղաքականութեան մէջ: Սըր է. Գրեյի ազդու միջամտութեամբ

A.R.A.R. @ digitized by

միայն խորհրդարանը վաւերացրեց Զբոսայգիի ծրագիրը, որից յետոյ Անգլո-Պերժնը փաստորէն ղարձաւ անդլիական պետական մի ձեռնարկ:

Թէ ի՞նչ արագ ու մեծ յարողութիւն ունեցաւ Անգլո-Պերժնը, երևում է դրանից, որ պատերազմի ընթացքին նա վճարեց և նրա կտորեկ անդլիական նաւատորմի մաստակարարման գործում: Պատերազմից յետոյ, 1921ին, նրա բաժանեթղթերի երկու-երրորդը և շրտանադրուի մօտ հինգ և կէս միլիոն սուխին արդէն գտնուում էին բրիտանական կառավարութեան ձեռքին: 1922ին Անգլո-Պերժնը ի վիճակի էր բաւարարելու Անդլիայի նաւթային պահանջի 80%: Ընկերութիւնը ընդարձակեց և կառարարագործեց նաւթարդիւնաբերութեան և փորձարդութեան միջոցները և այժմ իր տրամադրութեան տակ ունի հսկայական նաւթատար նաւատորմից: Այսօր Անգլո-Պերժնը աշխարհիս ամենաազօրաւոր անտեսակիս ուժերից մէկն է, որ վաղուց արդէն դուրս է եկել Պարսկաստանի սահմաններից և, որպէս արտադրող կամ վաճառող, թափանցել է շատ երկրներ՝ Ֆրանսիա, Ապսիան, Հոլանդիա, Ռումանիա, Միջագետք, Աւստրալիա, Նոր-Զիլանդիա, Հիւսիսային Ամերիկա, Մեքսիկո և այլն:

Ան այս կազմակերպութեան հետ է, որի թիկունքին կանգնած է բրիտանական պետութիւնը, ընդհարել է Պարսկաստանը: Ինչո՞ւ:

Ինչպէս տեսանք, պարսկական նաւթային հողերի շահագործման արտօնութիւնը աճուել էր շնչին գնով: Այդ շահաւէտ մենաշնորհը, ինչպէս և իր ազդեցութիւնը ապահովելու համար անդլիական կառավարութիւնը ջանք ջնասյոց Պարսկաստանի հետ նպաստաւոր գաշադրեր կնքելու համար: Արդէն 1907թ. Պարսկաստանը ազդեցութեան դատիներէ բաժանելը աչքի առաջ ունէր և նաւթային շրջանների ապահովումը: Պատերազմի տարիներին Պարսկաստանն ամբողջպէս ընկաւ անդլիական ազդեցութեան տակ. անդլիական զորքերը տարածւած էին Պարսից Մոցի ու Կասպից Մոզի միջև: 1919թ. օգոստ. 9ին ստորագրած դաշնագրով պարսիկ կառավարութիւնը պարտաւորուած էր ընդունել բրիտանական մասնագէտ-խորհրդակցանների ներկայութիւնը պետական գանազան հիմնարկութիւնների մէջ, իսկ անդլիական կառավարութիւնը իրեն էր վերապահում պարսիկ կառավարութեան ծախքով սպաների, ռազմամթերքի ու զինուորական պիտույքների մատակարարումը՝ պարսկական բանակի կազմակերպութեան և ներքին կարգի ու սահմանների պաշտպանութեան համար: Ուրիշ խօսքով, Պարսկաստանը անցնում էր բրիտանական թևարկութեան տակ: Միաժամանակ, անդլիական զորքեր կանգնած էին Բաթումում, Իւզումում և Անդրկասպեան երկրում: Ո՛չ միայն Հնդկաստանի ճանապարհն էր ապահովւած, Կովկասն ու Թուրքեստանն էլ գտնուում էր անդլիական հակակշիռի տակ: Բրիտանական յարդութեան գաղաթմանկէսն էր այդ:

Սակայն, պարսիկ ժողովուրդը չկամեցաւ հաշտւել իրանագրկման ու արկղայման հետ: Նա օգտւեց Ռուսաստանում կառարաւող ղեկավարից և բողջեկիների բրիտանական տիրապետութեան դէմ մղած կուրից՝ վերապանելու համար կորցրած անկախութիւնը: Ժամանակի պայմաններն ու ազգային ուժերի լարումը հրապարակ հանեց ներկայ շահ Ռիզա խանի պէս մի զօրաւոր

կամք, որ զլիաւորեց Պարսկաստանի ազատագրական շարժումը: Արտաքին ղեկավարել էլ նպատակեցին, և ահա իրար յետևեց շնչող յայտարարւեց 1919ի դաշնագիրը, ջնջեցին կապիտալիստիկները, վերականգնեց Պարսկաստանի մաքային անկախութիւնը և տեղի ունեցան մի շարք քայլեր, որոնք նպատակն էր Պարսկաստանի ներքին և արտաքին անկախութեան վերանաստատումը: Բնականաբար, այս պայքարը, ամենից առաջ, պիտի ուղղուի Անդլիայի դէմ, որովհետև անդլիական թաղաքականութիւնն էր Պարսկաստանը կաշկանդողը: Ընկած Հնդկաստանի և Բրիտանական կղզիների միջև, մեծ ճանապարհի վրա, իր արգասանդ նաւթային հողերով և ռազմական դիրքով Պարսկաստանը առաջնահարգ կարեւորութիւն ներկայացնող շրջան էր անդլիական աշխարհակալութեան ծաւալման և ամրապնդման տեսակէտից: Միայն բնական հարստութիւնները չէին, որ անդլիական տիրուիչ քաշում էին ղէպի շահնչանների երկիրը, այլ և, նախ և առաջ, թաղաքական ու ռազմապիտական հաշիւները: Դրանով է բացատրուում այն կատարից, ոչ մի միջոցի ու զորհրդութեան առջև կանգ չառնող պայքարը, որ անդլիական թաղաքականութիւնը կիրառում է Պարսկաստանի վերաբերմամբ: Նոյն երևոյթի արդիւնք է և Ռուսաստանի միջամտութիւնը այդ պայքարին: Անգլո-Պերժնի խնդիրը, իրօք, միայն անդլիականի յարաբերութիւնների արդիւնք չէ, այլ, ըստ հուրիւսի, անգլո-պարսիկ-ուսական և, եթէ կողմէք, ամերիկեան խնդիր: Դէպի պարսկական նաւթահողեր անտարբեր չէ և ամերիկեան թաղաքականութիւնը, որ կանգնած է ամերիկեան նաւթային ուժերի յետևը:

Ինչպէ՞ս կը զարգանան ղեկավարը, դժուար չէ նախատեսել: Անգլիան, ուզէ-չուզէ, պարտաւորւած է հրաժարուել բացարձակ տիրապետութիւնից Պարսկաստանում, ստիպւած է հաշի առնել պարսիկ ժողովրդի ազգային զարթօնը և անկախութեան ձգտումը, բայց ձեռք քաշել նաւթահողերի շահագործումից նա, քի հարկէ, չի կարող: Անգլո-Պերժնը նրա զօրութեան հիմքերից մէկն է Արեւելքում, Հնդկաստանի տիրապետութեան կարևոր մէկ ազգակը, նրա նաւատորմի անկախութեան, հետևաբար և ծովային աշխարհակալութեան գործօնը — այդ գէնքից Անգլիան չի հրաժարուի: Պարսկաստանը, որքան և ներշնչած անկախութեան գաղափարով, դեռ այն ոյժը չէ, որ հարկադրէ Անգլիային բոլորովին հեռանալ քի երկրից: Ո՛չ էլ խորհրդային իշխանութիւնն ընդունակ է Անգլիայի տապն առնելու: Բրիտանական իմպերիալիզմի յատկութիւններից մէկն էլ նրա արտակարգ ձկունութիւնն ու պայմանների յարմարելու կարողութիւնն է: Կասկած չկայ, որ Անգլո-Պերժնի խնդրում էլ, ի վերջոյ, կը գտնուի մի ձև, որ Պարսկաստանին որոշ գոհացում տալով հանդերձ՝ անխախտ կը պահէ անդլիական ազդեցութիւնը Պարսից Մոցի կեդրեցներին: Չպէտք է մոռանալ, որ բրիտանական ռազմաճակատը, թէկուզ և «պատահաբար», հաւաքուել ևն Պարսից Մոցում և անընդհատ ապոտում են պարսկական ջրերը: Չպէտք է անտեսել, որ Պարսից Մոցի ամին էլ, արաբական հողի վրա, շարժած են Անգլիայի հզօրութեան նոր յենարանները՝ ռազմական սուլանկները:

Վ.

Թ Ո Ւ Ր Ք Ի Ո Յ Շ ՈՒ Ր Ջ

Քէմալայեցիները քաղաքական յաղողութիւններու շարք մը ևս արձանագրեց 1932ին:

1. Հաստատում թուրքականացման դաշնագրի:

2. Ամբարկողում թուրք-խորհրդային յարաբերութեանց:

3. Կորոզում թուրքերիտալական բարեկամութեան դաշնագրի:

4. Անդամակցութիւն Ազգերու Դաշնակցութեան:

5. Համաձայնութիւն Փրանսայի հետ՝ Սուրիոյ մասին (սահմանադրութեան, կալածանքներու, երկաթուղիներու խնդիր):

6. Համաձայնութիւն օսմ. պարտքերու մասին:

Ձանց կատենէք ուրիշ բաղմամբի բանակցութիւններ և պայմանագրութիւններ ուրիշ ազգերու հետ:

1930ին Արարատի պարսկական մասը զինու. գորու-թեամբ գրաւելէ յետոյ, թուրքաց յաղողեցաւ զարեկամաբար իւրացնել աւարը, փոխարէն շնորհելով հարկաւար մը՝ սահմանին վրա (1931): Բայց Հողային այս փորձանկութենէն աւելի, իր զլիաւոր նպատակին եղաւ սպառնալի Պարսկաստանի զործնական բարեկամութիւնը: Ամբարկող իր նաճածները:

Նախ, ցրել տաւ Արարատի շրջանի քրտութիւնը, ոչ միայն թրքական, այլ և պարսկական սահմանագծին վրա: Յետոյ, խախտելով որ և է քրտական շարժում պարսկական ափէն, ընդհակառակ հնարքներ յղացաւ իր իշխանութեան ենթակայ Գիւրսեր քընլու ղէպի պարսկական Հող: Տարւան ընթացքին, մէկէ աւելի արշաւներ տեղի ունեցան վարձկան և դաւադիր տարրերու կողմէ:

Այս բոլորին վերեւ, շարունակելով բանակցութիւնները Հարևան պետութեան հետ, 1932 նոյնմբեր 5ին էնկիւրիի մէջ կնքեց ոչ-յարձակման և բարեկամութեան դաշնագիր մը, հինգ տարւան համար:

Առաջինը, ոչ-յարձակման դաշնագրը (8 յօդած) փոխադարձ շեղբուցութեան պայմանագիր մըն է, յար և նման ստեղծ որ Մեծ Պատերազմէն ի վեր կը կնքու գտնական պետութեանց միջև: Բայց, կը պարունակէ կարգ մը արձանագրութիւններ որոնք չափազանց թափանցիկ են և թելադրում վերին ղէպերէն:—

Յօդ. 3.— Երբ մէկ կամ աւելի պետութիւններ թշնամական շարժումներու սկսին պայմանագիր կողմերէն մէկուն ղէմ, և ուզեն միւս կողմին հողերէն զօք փոխադրել, ղէքը, ռազմաթեքը, պաշար, կենդանի և պետութեամբական այլ պիտոյք անցընել, կամ նահանջող զուճերը փոխադրել, կամ սողովուրդը բերելով իրենց նպատակին ի նպատակ զործածել և կամ զինուորական հետախուզութիւններ կատարել, պայմանագիր այդ կողմը տարված է զգնելով պաշտտպանել իր չեղադաժիւնը:

Յօդ. 4.— Պայմանագիր կողմերէն մէկը եթէ մէկ կամ աւելի պետութեանց կողմէ թշնամական արարեանքներ ենթարկել, միւս կողմը ամբողջ ուժով պիտի աշխատի, կազմութիւնը լաւ վիճակի մէջ ղեկու համար: Եթէ հակառակ այդ բոլոր ջանքերուն, պատերազմ ծագի, պայմանագիր կողմերը յանձն կտանին կացութիւնը միասին ջննել, երկու կողմին բարբաբաթն չանջնուն համապատասխան լուծման ձև մը գտնելու համար:

Յօդ. 5.— Պայմանագիր կողմերը յանձն կտանին չքայտարել ստեղծուող ապօրինի կազմակերպութիւններու, որոնք նպատակ ունին միւս կողմի երկրին հանդիսանալ անդրադարձի իրենց արտադրութիւն և կամ կառավարութիւնը փոխել: Նայմախ բնակութեան արտօնութիւն չպիտի տան այն անձերուն կամ կազմակերպու-

թիւններուն որոնք նպատակ ունին փրփակագնալ կամ ուրիշ որ և է միջոցով պայաքարի միւս երկրին ղէմ:

Առանց այս դաշնիքին ալ, Պարսկաստան 1930ի ամառէն ի վեր քրտական շարժման հանդէպ բունած է ղիրք մը որ ամէն դուռ կը փակէ: Թեհրան տարապէս կը զործարէ իր յանձնառութիւնները, առանց սպասելու որ իր դրացին ալ նոյնքան ուղղամիտ վարուի:

Տարւան ընթացքին, բարեկամութեան ամէն տեսակ արտայայտութիւններ պակաս չէղան երկու երկիրներուն միջև: Թէպէքը Բիւշարի, թուրքաց արտաքին զործավարը, զարնան Թեհրան այցելեց և ընդունեցաւ բացառիկ պատիւներով: Անան թուրք թերթերը գրեցին թէ բարեկամութիւնը այնքան սերտացած է որ, Շահն Շահ և Մ. Քէմալն այ տեսակցութիւն մը պիտի ունենան, սահմանափակ չողի մը վրա, հաւանաբար վանի մէջ: Այժմ ձեռք է և տեսակցութիւնը կրնայ ուշանալ: Կամ նոյն իսկ տեղի չունենալ: Էականը այն է որ երկու երկիրները հարկած են ընդհարման կէտերը, և կրնան աւելի ամբարկող մեքանցումը:

Կը սպասուէր որ Թէպէքը Բիւշարի անցնի նաև Իրաք, որոնքայն համար արևելեան դաշնակցութեան մը ծրագրեր (Թուրքիա, Իրան, Իրաք): Ասկան, բաւական բարձր ծրագիր է այդ, և Մ. Քէմալ առ այժմ ստիպւած է զուսնալ այն համաձայնութեանը որ Իրաքի կողմէն ալ կապահովէ թուրքաց անդրքրտութիւնը քրտական ո՛ր և է շարժումի ղէմ:

Թուրքիա շանձնեց Պարզանի շէյքը, որ ըմբոստացած էր Իրաքի ղէմ, բայց առանց դատաստանի կարեց անոր հետևորդներուն մեծ մասը, մօտ հարիւր հողի, որ նախապէս մահաւան դատապարտած էին վր կողմէ:

Ուրեմն, այս կողմէն ալ փարատած է քրտական մղձաւանջը: Ինչպէս և Սուրիոյ կողմէն, շնորհիւ Փրանսայի հետ կնքած համաձայնութեան:

Ապրիլ 2ին, Թրքական բաղմանգամ պատուիրակութիւն մը Մոսկուա գնաց, նախագահութեամբ Ըմէթ փաշայի: Թափօրին կընկերանային զործավարներ, կենսփոխաններ, հրապարակագիրներ և մասնագետներ:

Երկար ստեղծ ի վեր ծրագրած այցելութիւն մըն էր այս, և ստացաւ զղրղալին ցոյցի մը հանգամանքը: Անկախ իր քաղաքական հանգամանքէն, այցելութիւնը ուշադրաւ էր նաև անոր համար որ, թուրք ղեկավարութիւնն ու մտաւորականութիւնը ուղղակի չիման մէջ էր մանէն խորհրդային կարգ աւարքին հետ: Գործավարներն.— Իրենց անիկիական հետևորդները ամբողջ մէկ շաբաթ աքէ անցուցին բոլշևիկական յարեանակները, ռազմական, գիտական, անտեսական և ճարտարագործական: Այլապէս լայնեցին իրենց ի պատու արբըած գորահանդէս մը, առտու իրիկուն յեղափոխական ճառեր լսեցին և մենեցան զգուհ և կաղերբիչ տպաւորութեան տակ: Իսկ մասնաձեռները մնացին աւելի երկար, կարգ մը նորութիւններ ուսումնասիրելու և թուրքոյ մէջ փորձելու համար:

Բոլոր ճառերէն, փոխադարձ փոտարանութիւններէն և սիրալիի հաւատարմութիւններէն յետոյ, խորհրդային իշխանութիւնը ութ միլիոն տոլարի վարկ մը բացաւ: Այսինքն՝ այդքան զուճարի արժէքով մեքենաներ և զործիքներ արձանագրեց թուրքոյ, շաքարի և հիւսածեղէնի զործանակներու համար: Նաև մասնաղէտներ, որոնց դուրսը կը գտնուէր պրոֆ. Պաւլով, հնգամեայ ծրագրին հիմնադիրներէն: Քանի մը ամիս տալ, այդ մասնաղէտները, երկու խումբերու բաժնւած,

պտտեցան Փոքր Ասիոյ զլիաւոր քաղաքները և ծրագրերնք մշակեցին կարգ մը գործարարներու հաստատման համար: Բամպակի հիւսնածեղէնի համար նկատուելին Կիրիկիան՝ բայց յարմար չդասին:

Մոսկուայէն վերադառնալէ անմիջապէս յետոյ, Ըսմէթ փաշա և իր արտաքին գործադար գաջին Հոսով, և մաշխ Զին նորուկեցին 1928ի բարեկամութեան և շեղարութեան և իրաւարարութեան դաշնագրերը, հինգ տարւան համար:

Այստեղ ալ, փոտայկան կառավարութիւնը 30 միլիոն թրքական ոսկի փոխառութիւն մը խոստացաւ թուրքերէն, տասը միլիոնը՝ իրբև դրամ, իսկ մնացեալը՝ իրբև սպարանք:

Անկէ ի վեր վեց-եօթի մի անցած է, և խոստումը կը մնայ առկա: Ճարման վերջին շարժումը, թուրք թէրթեր կը արտոնջային թէ շատ յոյս չկայ որ բանակցութիւնները յաջողին:

— Ճնաշխ կառավարիկ որ խոստացած 30 միլիոն ոսկիէն զեղևի թուրքերոյ ունեցած պարտքը, իսկ մնացեալ 13 միլիոն ոսկիին փոխարէն ալ խոսակական սուղանքներ գնեն: Կը տեսնի որ խոսակական հաստատութեանց մի որ ունեցած 17 միլիոն ոսկիին պարտքը պատրաստ կ'ըլլած է որ տասը միլիոն ոսկիին կանխիկ վճարել մեղի, ինչպէս ծրագրուած էր:

Այս ցուցարարական այցելութիւններէն քիչ յետոյ, չեչուսիկ մէջտեղ դրեցաւ թուրքերոյ անդամակցութիւնը Աղզերու Դաշնակցութեան:

Վերջին երկու-երեք տարիներու ընթացքին շատ կը խօսուէր Մոսկուայէն, բայց թուրքերն միշտ խոյս կուտար: Այսպէս ալ հաճոցով չէր լսեր:

Կը թւի թէ՛ Մոսկուայի և Հոսով այցելութիւնները հարթեցին ճամբան: Թուրքիան անշուշտ իր սե օրը լացաւ, քանի որ դրամ չէ կրնար գտնել Եւրոպայի մէջ: Երկուքն ալ, Մոսկուա և Հոսով, մէկ-մէկ փշրանք ցոյց տուին, որ բանի չէր ծառայեր: Միւս կողմէ, բուն իսկ Իտալիան մէկէն էր այն պետութիւններէն որ ցանկալի կը գտնէին թուրքերոյ անդամակցութիւնը:

Ուրեմն, որոշ սպահովութիւններ ստանալէ յետոյ և իր կարգին որոշ հաւաստիքներ տալով իւր իշխանութեան, թուրքեա փեսացուի մը պէս պատրաստեցաւ Աղզերու Դաշնակցութեան հրահրէի: Յունիս 29ին ձեռագրի խմբակցութիւնը, այսինքն Մ. Քէմալի կուսակցութիւնը հաւանութիւն կը յայտնէր անդամակցութեան: Յունիս 1ին Աղզերու Դաշնակցութեան սպանիական պատերազմի առաջարկեց հրահրել Մ. Քէմալի թուրքերոյ: Յունաստանի պատերազմը — պ. Միխալաքոփոլոյն, որ Վենիզելոսի հետ ստորագրեց 1930 Նոյեմ. 30ի թուրքահնչիկն զոչնապիքը, հանդիսաւոր ճառ մը խօսեցաւ, ջերմապէս ուժ տալով: Եւ յուլիս 6ին Աղզերու Դաշնակցութեան ընդհանուր ժողովը, բացառիկ նիստի մը մէջ, անդամ հռչակեց թուրքեան: 28 պետութիւններ իրարու հետ մըցցումի լեւծ էին, նոր-փեսան դիմաւորելու համար, ոտքի տակ աննելով և՛ իրենց արժանապատուութիւնը, և՛ պատմութիւնը, և՛ բազմաթիւ հանդիսաւոր յանձնառութիւններ:

Այնպէս որ, երբ հոյս պատերազմները դուռնէ դուռ ապ կ'աննէին, զոնէ ստորագրուած դաշնագրերնրը յիշեցնէլու համար, ամենէն բարեացակամն ալ մէկ պատասխան կուտար:

— Մե՛նք էինք որ հրակիրեցինք. հիմա չ'նչպէս կրնանք անխորժ բաներ յիշեցնել...

Եւ Աղզերու Դաշնակցութեան սովորական նստաւարջանին (1932 սեպտեմբեր), թրքական պատմագիրու-թիւնը իր տեղը գրաւեց հանդիսաւորապէս: Մափերու մէջ, բայց ոչ այնքան խանդավառ: Ընդունելութեան որոշումին ատեն ալ, Էնկիլիքի պարտք սկսեց անմիջապէս հեռագիր մը փոխանակել Մոսկուայի հետ, կրկնելով իր հաւասարմութիւնը:

* * *

Թուրքերոյ այս յաշտութիւնը ջերմապէս ողջունեցաւ Ֆրանսայի Երեսփ. Ժողովին մէջ, յատուկ բանաձեւով մը:

Այդ արարողութիւնը անշուշտ մաս կը կազմէր այն բանակցութեանց, որ կը կատարուէին Փարիզի և Էնկիլիքի միջև, Սուրիոյ վերաբերեալ վէճերու մասին:

Արգարև, անցեալ աշնան արնթիաց երթիկի մը տեղի ունեցաւ Փրանսացի և թուրք պատերազմներու, և տարիներով ձգձգուած բանակցութիւններ յանկարծ կոծկեցան: Հոկտեմբեր 27ին Էնկիլիքի մէջ կը ստորագրուէին երկու պայմանագրեր, մէկը՝ Սուրիոյ թրքական և թուրքերոյ սուրիական կալածանքներու մասին միւրը՝ Ալէքսանտրէթ-Քուրաբ-Գայէ-Մէլ յոսն-վերջակ-Հալէպ-Չոպան քէօ-ճնիսիպլին երկաթուղիի մասին:

Այս համաձայնութիւնն յետոյ, որ իր կարգին կանտեսէ, կը զո՛ւէ հայկական իրաւունքները, մինչև անդամ Կիրիկիոյ վանքերն ու եկեղեցիները — Հակառակ բազմաթիւ հաւաստիքներու — Փարիզի թէրթերն իսկ սկսան աւելի բաց խօսել Սուրիոյ հոգաւորութեան վերացման մասին: Անոնք ալ կը խոստովանէին թէ Իրաքը Աղզերու Դաշնակցութեան անդամ ընտրուած ըլլալով, կարգը եկած էր Սուրիոյ: Մանասանդ որ, Էնիօ և Փոյ Պոնքուս կուզէ իրենց ուրբը ուշադրութիւնը կեդրոնացնել Եւրոպայի մէջ, ան նոր հրարութիւնը կը միանայ:

Այս համաձայնութիւնը հարթեց ճամբան՝ միւս կարգադրութեան, օսմ. պարտքերու հարցին, որ անլուծելի կը համարէր զեռ վեց ամիս առաջ:

Թուրքեան երկու տարիէ ի վեր չէր կրնար կամ չէր ուզեր վճարել 1928 յուլիս 13ի պայմանագրով սահմանուած տարեկանքեր: Բաժնետէրերը, մեծ մասով Փրանսացի, կը զանգատէին՝ կառավարութեան: Ամբողջ երկու տարի աղի-լեղի խօսքի փոխանակեցան: Թուրքերը պարզապէս կրէին — Չպիտի վճարենք: Ի՞նչ կը շահիք սպանալով: Այդ պարտքերը մնացած են օսմ. կայսրութիւնէն: Միջոց արձանարեղեցէք, քանաւոր դուրմար մը որոշեցէք որ կարենանք համաձայնիլ:

Ինչպէս քարեք, նահանջը սկսած էր Փարիզի մէջ, և սուրիական համաձայնութիւնէն քիչ յետոյ, թուրք թէրթերը սկսան աւետն թէ կարգադրուած է նաև Հանրային Գարտերու խնդիրը:

Դեկտ. 14ին, ստորագրեցաւ նախնական պայմանագիր մը, որուն համաձայն Հանրային Գարտքն թուրքերոյ ընդհանուր բաժինը պիտի ըլլար 895,435,000 Փրանք, որուն համար թրքեան նոր արժեթուղիքը հրապարակ պիտի հանէին, ի փոխարէն օսմ. ներկայ արժեթուղիքերուն: Նոր արժեթուղիքերը մինչև տասը տարի չպիտի կրնան փոխանակուիլ և պիտի վճարուին Փրանսական Փրանքով կամ երկուրդը հաստատուն դրամով մը: Տարեկանը պիտի ըլլայ 670,550 թրքական հնչուս ոսկի: Վճարումը պիտի սկսի 1933 յուլիս 1էն, եթէ Աղզ. Մեծ ժողովը վաւերացնէ:

Անցնելով թուրքերոյ ներքին կեանքին, տարւան սկիզբը, փետր. 18ին հրատարակեցաւ պատկերազարդ խարէութիւն մը, — ճերթեկի նոր հրահանգը, որ մինչև այսօր կը շոյ՛ շատ մը միամտներու երեակալութիւնը:

Այդ հրահանգով, թուրքեա վերադառնալու իրաւունք պիտի ստանային բոլոր այն թրքահայաստանիներ որոնք արտասահման փախած են առանց թրքական անցաքիթի ստանալու: Ասոնք երեք-երեք «պէյ յաննամէջ» (յայտարարութիւն) պիտի ստանային թրքական հրապարտաքանններէն, և պատասխանները պիտի ըլլային պատկեր հրամանի:

Մինչև այսօր ալ կը սպասեն... Մանասանդ անոնք որ «լքեալ գոյներ» փրկելու միամտութիւնն ունին:

Կառավարութիւնը, երեկ վախճալով որ դատաքաջողներու բազմութիւն մը պիտի թափի, լաւագոյն կը

Համարի լուծութիւն պահել, և օրօրէլ: Մինչդեռ, զիմող-ներու թիւն ալ գանցատեղի քանակութիւն մը կը կազմէ: Այս հրահանգէն յետոյ, հրատարակեցաւ զետեղման օրէնք մը, ուղղած բոլոր այն Համախմբումներուն դէմ որոնց մայրինի լիզուն թուրքերէնը չէ: Աստիք իրաւունք լուծին զիւր մը, թաղ մը կարգելու, միեւնոյն պահեսար ի գործ դնելու: Կատարութիւնը իրաւունք ունի ցրելու առկայիս Համախմբումները, մէջն ըլլալով նաև անոնք որ արդէն գոյութիւն ունին:

Օրէնքը մէկ անգամ հրատարակեցաւ թերթերուն մէջ, և անկէ ի վեր կը տիրէ բացարձակ լուծութիւն: Այսինքն կը գործադրուի լուծ ու մտնող և անարդէլ, Անատուրի խորհրդ, առաջին առթիւ: Քիւրտերու գլխուն:

Փետր. 19ին, Հանդիսաւորապէս կատարեցաւ բացումը Վալթի իլիկներուն (ժողովրդի տուն): Եսախիկն Վերսը օճաղներն են աստիք, որ Մ. Քէմալի հրամանով լուծեցան իր կուսակցութեան՝ Պալքի մէջ: Վալթին չէր կրնար առանձին ձգել երիտասարդական ցանց մը, որ կը համարէ 300,000 անդամ, 280 մասնաճիւղերով: Մշակչիքի, Համաքրքական խմորումներու վաճառաններ էին աստիք, և Մ. Քէմալ ուղեց որ ենթարկին իր շփարցուցած սերունդին հակողութեան և ներշնչման, իրեն պահեսար ուժ: Քէմալայապետութիւնն ալ կուզէ սև շապիկաւորներու վաշտի կազմել, ձևափոխելով բազմանդամ կազմակերպութիւն մը:

Այս միեւնոյն մտահոգութեամբ, Մ. Քէմալ գիտակցածորէն սրբապիլով դարձրու պատմութիւնը, մերժելով Կադի Օսմանի ժառանգութիւնը և արիական ծնունդը, զաղաքակրթութեան հիմնադիր հռչակելով թուրքը, սեպու. 26ին Տոյա՝ Պալչէի պարատին մէջ արքեց կէս-ուրը, կէս-գաւեշտական համադումար մը, թուրք լիզին բարեկամ համար: Այս առթիւ պատրաստեցաւ աշխատանքի ծրագիր մը, որուն շնորհիւ երևան պիտի հանուրի ասն թուրք լիզի գանձերը, ժողովրդական բառերն ու սուլումները, գտնու, թրքացիներու համար լիզուն: Գրաւոր լիզին պիտի վտարին բոլոր օտար բարերը (արաբերը և պարսկերէն):

Այսպէս, թուրքիս տարին փակեց շարք մը շուսփելի յարողութիւններով, և շատ մըն ալ «ուճալմաներով»: Երկար ատենի համար չունենալով արտաքին վախ,

կը փորձէ ինքն իր մէջ ամփոփուիլ և ինքն իրեն բաւել: Տնտեսական տագնապը ծայրագոյն աստիճանին հասած է փնչպէս մեծ քաղաքներուն, նոյնպէս Անատուրի դիւղերուն մէջ: Ամբողջ տարւան ընթացքին թերևս տասն անգամ օրէնք և հրահանգ փոխեցին, Երկրին վաճառակախութիւնը և դրամը փրկելու համար: Ատեն մը ներածումները այն աստիճան սահմանափակեցին որ, նորահաստատ գործարաններ փակման դատապարտեցան: Հարկ եղաւ բարեփոխումներ կատարել, փոխել տնտեսական գործադարը, և ինքնալստահութիւն քարոզել: Մ. Քէմալ այստեղ ալ ցցեց իր հասակը, կասկածները փարատելու, երկրին ապական լուսաւոր ցուցնելու և ժողովուրդը գործի մղելու համար: Եւ մամուլը ամխններով ընթան ընդդէմ «Կալթի»ի պատգամները: Պարագրականի վերածեց անոր ամէն մէկ խօսքը:

Եւ սակայն, էլմտացոյցը չէ՝ հաւասարակշռում: Ամենէն կրճատեալ վիճակին մէջ ալ — 170 միլիոն ոսկի — քաջ ունի եմտացոյցը: Ու միշտ ին տուրքեր կը ծրագրուին, կամ եղածները չէր բարեփոխուին:

Այս տարի ալ, զեկտ. 12ին, Հանդիսաւորապէս քացեցաւ ինտրոլութեան շարքը: Բացման ճառերը իտեցան վարչապետը և Ազգ. ժողովին նախագահը: Այս առթիւ ալ շեշտեցաւ՝ ինքնալստահութեան, ապահովութեան պահանջը: Երկու ճառախօսներն ալ՝ յատուկ յորդորներ ուղղեցին կիներուն, որպէսզի տեղական արտադրութիւններով ապահովեն իրենց ուտելիքն ու հագնելիքը: Եանձնարարեցին, նաև, ոպուուր տեղական պտուղները, թուզ, շամիչ, կալչին, նարինջ, որոնք յաճախորդի կը սպասեն: (Միեւնոյն ատեն կազմակերպւած է պտուղի շարք մը):

Ոնայտութեան շարքը հաստատուեցաւ 1930ին, երբ օտ. ոսկին թաւալուր կիշար: Եթէ հաւատարմ Ազգ. Մեծ ժողովի նախագահն, այլ քաղաքներն դրամատուններու մէջ պահ արած ինտրոլութեանց գումարն էր մէկ միլիոն ոսկի: 1931ին արդէն 38 միլիոնի հասած էր, և այժմ կը յուսան համարել 50 միլիոն:

... Ոչ մէկ փոփոխութիւն՝ փոքրամասնութեանց ճակատին վրա: Ընդհակառակն պարբերական կուէր՝ իրենց «թրքութիւնը» սպացուցանելու:

Կ Ի Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ն Ո Ւ Գ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ն Ի Ո Ր Հ Ր Գ Ա Յ Ի Ն Ա Շ Խ Ա Ր Հ Ո Ւ Մ

I
Կ Ի Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ն

Արտասահմանի հայ մամուլը համեմատաբար շատ տեղ է տալիս խորհրդային տնտեսութեան ու զարգացման խնդիրներին, բայց մշակողիքի, կրթական գործի, նոր սերնդի դաստիարակութեան հարցերով շատ քիչ է պատշաճում: Պատճառը գլխաւորապէս, ո՛ր հարկէ, ներքի պարտութիւնն է. տնտեսութեամբ ու զաղաքակախութեամբ շատ է Հետաքրքրուում և արտասահմանի օտար մամուլը, մինչ մշակչիքին ներքած գրութիւնները աւելի քիչ են երևում:

Հետագայ էջերը զրի առնւած են մի անձի կողմից, որ շուրջ տար տարի ապրել է Պարսիք. Միութեան դաժնադան կողմերում: Մասնաւորից սկսած մինչև Հայաստան, անձամբ աշխատել է կրթական և արդիւնաւորակաւ հիմնարկութիւններին մէջ և շատ մօտից ծա-

նօթ է ոչ միայն արտաքին երկրոյներին, այլ և գործի էութեան: Պտուցած ու սեղծ սճով, կարելի ատարկալակաւութեամբ՝ նա զծում է խորհրդային կեանքի պատկերը, այս անգամ կրթական ու դաստիարակութեան ընթացաւում, յաջող անկաններ՝ որչի մասերում, և ընթերցողը՝ տրւած փաստերի հիման վրա կը կարողանայ կազմել որոշ, յատուկ գաղափար մինչև այժմ շատերին մտթ և անհասկանալի մտացած երևոյթներէ մասին: Մենք առաջնութիւն ենք տալիս կրթական ու դաստիարակական գործին, սրովհետև, ինչպէս նկատեցինք, արտասահմանի հասարակութիւնը այս խնդիրներին ամենից քիչ է ծանօթ:

Կրթական ինչ հաստատութիւններ ու ձեռնարկներ կան խորհրդային աշխարհում, ինչպէս է վերաբերում գէպի կրթական գործը Գոմուշիտանական Կուսակցութիւնը, որ խորհրդային երկրների փաստական կառավարութիւնն է:

Բողոքները օգտուած են կրթական գործի բոլոր միջոցներէջ: Ո՛չ մի երկրում կրթութիւնն ու դաստիարակութիւնը քաղաքական այնպիսի Հատու զէնք չէ, որքան խորհրդային աշխարհում: Մատուց սերնդի և զանգաւածների կրթութեանն ու դաստիարակութեանն մեծ կարևորութիւն է տրւում: Խորհրդ. Միութիւնը մէկ ծայրից միւրը ծածկւած է կրթական Հաստատութիւնների խիտ ցանցով:

Այսպէս, 3—4 տարեկան երեխաների Համար կան մանկական մտորներ: Մալը, որ պարտաւորւած է աշխատանքի գնալ զործարան, դաշտ կամ պետական հիմնարկութիւն, առաւօտեան երեխան ձգում է մտորը, երեկոյան վերադարձին տանում է տուն: Բնակարանը, երեխան ամբողջպալէս ընկնում է վարժուհիների խնամքի և ազդեցութեան տակ և ընտանիքի դաստիարակիչ դերը թուլանում է: Արդէն մտորից սկսած, խաղերն ու դասերի մէջ, երեխային ներշնչւում են կամուրջատական զաղաքարներ:

3—7 տարեկան երեխաների Համար կան մանկապարտէզներ, մանկական հրապարակներ, խաղատներ, թատերաշարժապատկեր, կարմիր անկիւններ, ակումբներ, Հոկեմալեբիկներ, փողովներ, ինքնավարութիւններ, մանկական բոլոր զգայարանները կրթող ամէն տեսակ խաղալիքներ, երեխաներն տարբեր ու ֆիզիքական ուժին Համապատասխան բազմաբնուստեան աշխատանքներ, առողջապահական կայաններ ու բժշկական խնամք, երեխաների ամուսնու մտաւորական զարգացումը խթանող գիտական միջոցներ և այլն և այլն: Կարելի է ասել, որ երեխայի ամբողջ ժամանակն ու եռանդը գրւածած է: Նրա զուլանն ու սիրքը լցնելու են առաւ նիւթերով, որոնք բոլորն էլ ծառայում են յօգուտ խորհրդային իշխանութեան, ամբացնում ու խորացնում են երեխաների մէջ ստեղծութիւնը դէպի ոչ բոլշևիկի աշխարհը, ստոցնում են ծնողներից կամ ազգային միութիւնից և աշխատում են դարձնել կոմունիստ-միջազգային քաղաքացի: Նախադպրոցական Հասակում երեխան անլի դաստիարակութիւն է ստանում, քան կրթութիւն:

Եօթը տարեկանից վեր երեխաները մտնում են դպրոց կրթութիւն ստանալու նպատակով: Նախնական կրթութիւնը տրւում է առաջին տասնհինգի ջառանգայ կամ Հնգամեայ դպրոցներում: Կան և եօթամեայ ու իննամեայ գործնական թէքում ունեցող դպրոցներ, ինչպէս նաև գործնական ուսումնարաններ գործարաններին, արհեստանոցներին, ագրարներին ու տնկարաններին կից: Այս դպրոցներում տրւում է տարրական կրթութիւն, բայց զուգընթացաբար ահագին ուշադրութիւն է դարձւում բոլշևիկեան դաստիարակութեան վրա: Այս Հասակի երեխաները անխորթ արձանազուած են պիտոներական կազմակերպութիւնների մէջ, ունին այլապես միութիւններ, թէրթ — «Պիտոներկան» — գրականութիւն, մարզական խմբեր, ճամբարներ, ինքնավարութիւններ, փոխադարձ օգնութեան խմբակներ, թափուրներ, հրապարակներ, մասնակցութիւն Հասարակական ու դաշտային աշխատանքներին, կապի ու կարգապահութեան պահպանման և այլն: Եւ ոչ ոք խորհրդային աշխարհում այնքան միջոցանութեանը չի կատարում իր վրա դրւած պարտականութիւնները, որքան պիտոնեք պատանին:

Նախնական կրթութիւնը սահմանափակւում է 8—16 տարիքով: Այստեղ էլ վերջանում է ընդհանուր կրթական գործը: 16 տարեկանից պատանին գնում է կամ գործարան, կամ ուրիշ աշխատանքի և ընտրեալները միայն՝ ջարձարուցի վարժարաններ՝ մասնագիտական զարգացում ստանալու Համար:

Բացի այդ, խորհրդային բոլոր Հաստատութիւններին կից կան, այսպէս կոչւած, որակաւորան բաժանումներն ու որակաւորող դասընթացներ, որոնց նպատակն է օգնել անխորժ ու անպարտաւոր բանւորին արհեստի վարժութիւն ձեռք բերելու: Այսպիսի դասըն-

թացների կարելի է Հանդիպել ամենամանչան գործարանից սկսած մինչև բարձրագոյն կրթական Հաստատութիւնները:

Պէտք է արձանագրել նաև անդրադիտութիւնը վերացնող կայանները կամ լիկկուսիները: Լիկկուսիները ի աշխատանքը չի սահմանափակւում միայն կարգադրել չիմացողներին դրագիտութիւն սովորեցնելով: Նրանց դերը անլի լայն է: Նրանք ձգտում են վերացնել և մասնագիտական անդրադիտութիւն: Օրինակ, գործարանի տեսուչ կոմունիստ անտեղեկ է իր արհեստին, պէտք է նրան արհեստ սովորեցնել, տեխնիկապէս դարդէտ դարձնել և այլն:

Չինւորական ծառայութեան մէջ էլ երիտասարդին տրւում է կրթութիւն ու կոմունիստական դաստիարակութիւն: Գաղղրայիտութեան դասերը պարտաւորեցուցիչ են, ինչպէս նաև լրագիրների և գրքերի ընթերցանութիւնը: Բացի այդ, կան զինւորական թատերուներ, սինեմաներ, լինիման անկիւններ, ակումբներ, մարզարաններ, խաղադաշտեր, մարզական ու որսորդական միութիւններ, ռաբփական, առողջապահական և բազմապիսի այլ Հաստատութիւններ, որոնք ծառայում են զանգաւածների դաստիարակութեան գործին:

Ի՞նչ եղանակով է տարւում կրթական գործը խորհրդային աշխարհում:

Կրթական գործը բաժանւում է երեք մեծ ձևերի.

ա) Առցաւադպրոցիւն — սոցիալական դաստիարակչական վարչութիւն, որին ենթակայ են մանկապարտէզները, մանկական հրապարակները, առաջին տասնհինգի, եօթամեայ և իննամեայ ընդհանուր զարգացողական դպրոցները, ընդհանուր դարգացման ծառայող Հաստատութիւններն ու կազմակերպութիւնները, այսինքն՝ ամբողջ այն գործը, որ զարգացնել է երեխաների ու պատանիների կրթութեամբ ու դաստիարակութեամբ:

բ) Արիզիլուավարչութիւն — արհեստագիտական գիշարը լուսաւորութեան վարչութիւն, որի Հսկողութեան տակ են մտնում ամէն տեսակի ու կարգի արհեստագիտական ու մասնագիտական դպրոցներն ու Հաստատութիւնները, գիտական ու ուսումնասիրական ընկերութիւնները, գեղարհեստական ու Հրատարակչական միութիւններն ու վարչութիւնները, գիտական արշաւաւերը և ամէն տեսակի մասնագիտական մարմիններ:

գ) Քաղաւազարչութիւն — քաղաքական լուսաւորութեան վարչութիւն, որ ղեկավարում է բոլոր տեսակի և աստիճանի կուսակցական դպրոցները, քաղաքական քարոզչական խմբակներն ու միութիւնները, անդրադիտութիւնը վերացնող կայանները, կրօնի, նախապաշարունակի, Հին կարգերի դէմ պայքարող միութիւններն ու Հրատարակութիւնները և այլն:

Կրթական գործը կառավարելու և Հսկակշռելու Համար կան կենտրոնական և տեղական մարմիններ: Կրթական ամբողջ գործը, իր գլխանակ ծաւալով, ենթակայ է Համամիութեանական լուսաւորութեան գործաւարին՝ լուսժողկոմին, բայց իւրաքանչիւր Հանրապետութիւն ունի և իր սեփական լուսժողկոմատը երեք մեծ վարչութիւններով — սոցալաւարչութիւն, արհիլուավարչութիւն, քաղաւազարչութիւն — և իւրաքանչիւր քաղաք ու դաւառ ունի իր լուսաւորի վարչը՝ Համանման երեք բաժանումներով: Իւրաքանչիւր կրթական Հաստատութիւն՝ ղեկողական դպրոցից սկսած մինչև Համալսարան՝ ունի տանձին վարչութիւն, որ ղաղկանում է տեղից կամ վարիչից, կուսակցութեան, Կոմսոմոլի, եթէ սոցալաւարական Հաստատութիւն է, պիտոներական կազմակերպութեան, Չեկայի, արհեստակցական միութեան և մանկավարժական խորհրդի մէկական ներկայացուցիչներից,

ինչպէս նաև առողջապահական բաժնի բժշկից: Այս մարմինը երբեմն էլ կրօնում է մեթոդական բիւրօ, որ ուղղութիւն և ընթացք է տալիս ամբողջ կրթական գործին, տեղական սահմաններում:

Հետաքրքրական է ջննել և դպրոցների ծրագրային ու մեթոդական կողմը: Ծրագիրը շատ ճոխ է և երկու երրորդով ներկած է հասարակագիտական ներթնթն: Ուսուցման գործը դեռ, կարելի է ասել, փորձնական շրջանում է դառնում: Մեթոդները իրար են յարդրում և վերջնականապէս չեն կայունացել: Ժամանակագրական կարգով, առվ պէտք է յիշել կոմպլեքսային մեթոդը, որով մի ժամանակ շատ էր ուղևորւած խորհրդային մանկավարժութիւնը, ապա պարսկու մեթոդը, դաշտոն պլանը, լաբորատոր մեթոդը և այլն: Հիմա արդէն ժխտում են բոլոր այդ մեթոդները և նկատում է վերադարձ դէպի հին եղանակները և, առաջին հերթին, դէպի առարկայական դրութիւնը: Վերջ բրգադաշին դրութեան, վերջ ազատ դասացուցակին: Նորից դասարանական դրութիւն ու մնայուն դասացուցակներ: Կատուած որոնումներն ու փորձերը ցոյց տւին, որ զբաղւորութեան ու զարգացման աստիճանը շատ է ընկնում: Այս երևույթի առջև առնելու համար նորից որոնելու են դրամատորական աշխարհի մշակած կրթական եղանակները՝ ջննութիւններով ու թւանշաններով հանդերձ:

Ի՞նչ է խորհրդային դպրոցի նպատակը: — Պատասխանել խորհրդային պետութեան համար մասնագէտ, հրու ու կամակատար գիտաբաններ: Անհատը աշխուժ նկատուած է որպէս պետական ամբողջութեան մէկ մասնիկը: պետութիւնը մեծ մեքենայ է, մարդը նրա մէկ կողմը: Կրթութեան ու դաստիարակութեան բոլոր մասհոգութիւններն ուղղւած են այն կողմ, որ անհատը լաւապէս ծառայէ ամբողջութեան՝ պետութեան և դասակարգի կարիքներին: Անհատը ինչն էլ, որպէս ապրող ու զարգացող էակ, արժէք է ներկայացնում: Անարժէք են և նոյն իսկ վնասակար նաև ազգային անհաստականութիւնները: Կրթութիւնն ու դաստիարակութիւնը ձեռով միայն, այսինքն՝ լեզուով ազգային է, իսկ բոլորանպաստութեամբ՝ միջազգային, աւելի ճիշտ է ասել՝ հակաազգային: Լեզուն էլ ամէն տեղ տիրող չէ: Հայաստանում, օրինակ, ձեռակարգի պաշտօնական լեզուն Հայերէնն է, բայց իրապէս ուսուցիչն լեզուն իշխող է՝ գինւորական, ֆինանսական, առևտրական, փոստ-հեռադրական, Չեկոսի, կապի սպասարկութեան մեծ արդիւնաբերական ձեռնարկների եւ մի շարք ուրիշ կարեւոր հաստատութիւնների մէջ: Երկաթուղու գծի վրա, Լենտեկատրոյում եւ պղնձահանքերում աւելի շատ ուսուցիչն է լուում, քան Հայերէնը: Նոյն իսկ Հայաստանի հանրային կրթութեան գործադարութեան մէջ ուսուցիչը — Լենինի լեզուն — անընական լեզու նշանակութիւն ունի: Ոչ-ուսուսիտ ուսուցիչները ողորմելի վարժապետներ, սիրաբաններ են հայաստանում: Իսկական զարգացած ուսուցիչը պէտք է ուսուսողն լինի: Նոր սերունդն էլ ձգտում է ուսուցիչն լեզուն: «Ուսուցիչն է, որ հաց ու դրք պիտի տայ մեզ, մեր առջև պիտի բանայ գործարանի ու բարձրագոյն դպրոցի դռները»...

Գալով կրթական ցանցին Հայաստանում՝ պէտք է ասել, որ, ընդհանուր առմամբ, դիւղերի ունին իրենց տողովը տեղական դպրոցներ, բայց ոչ մանկավարժութիւնը: Մեծ դիւղերում կան եւ կոմերիտ-ճօթնամեայ դիւղատնտեսական թեքում ունեցող դպրոցներ: Արհեստագործներին կից կան եռլինանկա և տասնամեայ արհեստագիտական դպրոցներ: Երեսնն ու Լենինականը ունին իրենց մանկավարժական-արհեստագիտական մեթոնայական — յիմնովորէ և գիւղատնտեսական ու բժշկա-առողջապահական տեխնիկումները: Երեսնում կայ նաև «Համալսարան», որ այժմ վերածուած է մանկավարժական ճեմարանի, կան բժշկական, իրաւագիտ-

ական և շինարարական ինստիտուտներ: Ինչպէս նաև երաժշտանոց և այլն:

Հայաստանի բարձրագոյն վարժարանները զուտ տեղական հիմնարկութիւններ են, տեղական կարիքներին բաւարարութիւն տալու համար: Համաժողովրդեանական նշանակութեամբ ոչ մի կրթական կամ գիտական հիմնարկութիւն գոյութիւն չունի Հայաստանում: Ոչ մի գիտական-հետազոտական հաստատութիւն: Բայց նման հաստատութիւններ կան Վրաստանում և Ադրբեյջանում: Հայաստանը այս տեսակէտից էլ զրկւած մի գաւառ է:

II

ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Դաստիարակութեան տեսակէտից խորհրդային երկրներում նոր սերունդը բաժանում է հետևեալ երեք համախմբումների — հիլիտներին, պիւններ, կուսմալ:

Հոկտեմբերից նախադպրոցական հասակի երեխան է, 3-7 տարեկան: Նրա նկարագիրը կազմւում է ո՛չ թէ տանը, ծնողների ազդեցութեան տակ, այլ մանկավարժութեամբ, ուր նրան սովորեցնում են, թէ այժմ՝ Աստուծո բարային յաջորդել է Լենին բարան: Աստուծ չկայ՝ ամէն բանի աղբիւրը ընտրութիւնն է. փառք ոչ թէ տիրեցրական ուժին, այլ մայր հողին, որ մեր ծնողն է և հաց է տալիս մեզ: Երեխային ներշնչւում է այն միտքը, թէ նրա ծնողները ոչինչ են, թէ ծնողների տեղը այժմ բռնել է Կոմունիստական Կուսակցութիւնը: Նրանց հողիները լեզոււմ են ասելութեան հրով դէպի բուրժուանները, դէպի միջազգային գիշատիչ կառավարութիւնները, դէպի դասակարգային թշնամիները: Նրանց ամենօրեայ խաղերն են դասակարգային և կուսակցական պայքար: Կախել դաշնակից, կախել կաթուղիկոսին, Չէմբերլէնին, Ռաջսոլ Տրոցկուն, սոցիալ-դեմոկրատական Կուսուցիւն, Մակդոնալտին, կուսակին, առևտրականին և այլն: Հոկտեմբերից մեծանում ու սնանում է թունաւոր ասելութեամբ դէպի այն ամենը, որ բոլշևիկեան չէ: Մեծ աշխատանք է թափում խաղերով և այլ միջոցներով դրաւելու երեխաների համարանքը: Մանկավարժով զբաւսող բոլոր երեխաները պարտադրաբար հոկտեմբերիկ են: Հասկանալի է, որ նրանց դաստիարակութիւնը կատարւում է ընտանիքից դուրս, ծնողական ազդեցութիւնից հեռու, որով կապող գաւաղիկ է ծնողի միջև զգայի չափով թուլանում է:

Հոկտեմբերից յետոյ դալիս է պիւնները: Առաջին աստիճանի և եօթնամյա դպրոցների բոլոր աշակերտաշակերտուհիները պարտադիր կերպով մտնում են պիւններական կարգակերպութեան մէջ: Պիւնները բոլշևիկեան սկտանն է: Արթուն, աշխատեց, միշտ պատրաստ կատարելու վերի հրամանը: Պիւնները ամենա-վտանգաւոր չեկիտան է. նա պարտաւոր է աշք ածել և ակնմջ գնել, տեսնել ու լսել ամէն ինչ իր շրջապատում, իրենց ու դրացիի տանը կատարանները, լըրտեսել բարեկամներին ու ծնողներին, հետևել ուսուցիչներին դպրոցում ու դուրսը և ամէն բան հարդրողի իր պահին: Չեկան լայնօրէն օգտւում է պիւններին տեղեկութիւններից: Սակաւ չեն գէպքեր, երբ երեխան մտանել է ծնողներին, երբորը, ազգականներին և այլ մասնութեան հիման վրա ծանր պատիժներ են տրւել:

Պիւններութիւնը հրապուրել է. պատանիները դրաւում են պիւնեցական կազմակերպութեան մէջ ունեցած ապատութիւնից, շողչողուն Հաղուսաններից, զանազան առանձնաշնորհումներից և հեշտութեամբ են միակրում են իրենց պետերին, սիրով կատարում իրենց վրա դրւած պարտականութիւնները: Ի՞նչ խաղ պատանու համար աւելի հետաքրքրական ու համելի, քան հսկողութիւնը, հետախուզութիւնը ու լրտեսութիւնը: Լենինն

առել է: «Մեք զաղաքական պայքարի ընթացքին պէտք է օգտուել դատարարական թուրք հասու գններին»։ Եւ նրա յայտարարները օգտուած են. և այն էլ ինչպէ՛ս: «Պրոնե՛ր, հետեփր ամենքին և հարողքե՛ր. աշխարհ գինւած է մեր դէմ: Հին աշխարհը մեր դէմ է, իսկ հին աշխարհի մէջ մտնում են և քո ծնողները և քո ուսուցիչները: Քո ընկերն իսկ ժառանգականութեամբ հին աշխարհն է ներկայացնում: Հետե՛րք, հախը և քո ընկերոջ վրա»: Պրոնե՛ր չի կարող չտարւել այս ներշնչումներով. նա Չեկայի հաստատարիմ գործակալն է:»

Պրոնե՛րին յայտարարում է կոմսոմոլը կամ կոմերիտականը: Երիտասարդը չի կարող չեղոք մնալ. նրա տեղը կոմսոմոլի շարքերումն է: Չեղոք երիտասարդը հակայնդատարական է՝ դառնալով: Այդ պատճառով, երիտասարդութեան խոշոր մասը գտնուած է կոմսոմոլի շարքերում: Բայց եթէ պրոնե՛րը հարիւրին հարիւր հրու կամակատար է իր զիկալարիներէ, կոմսոմոլի մէջ արդէն կան զգալի շերտաւորումներ, որոնք խախտում են միասնականութեան սկզբունքը: Պրոնե՛րը դեռ մտածել չգիտէ, զգացմունքով ապրող տնաս պատանի է: Կոմսոմոլի միտքն արդէն անտարբեր չէ՝ դէպի արտաքին աշխարհը. խորհրդային իշխանութեան պաշտօնական նախնուներին կողքին նա տեսնում է և կենսի սուբուրաւոր կողմերը և, իբրև երիտասարդ, չի կարող զննողատական վերաբերում չունենալ ու չգիտած կարիքի պատճառը: «Աջ ու՛ «ձախ» թե՛րումները, ընդդիմադիրները, «քողարկած դաշնակները» բացառիկ երևոյթ չեն կոմսոմոլական կազմակերպութեան մէջ. Կոմկուար մեծ ուշադրութեամբ հետևում է այդ երևոյթներին և լանցաւորներին շատ խիստ պատիժներ է ստալի, երբեմն, նոյն կնի կնիթարկելով զանգաւածային զնդակա՛ւորութեան:

Բայց և այնպէս, Կոմսոմոլը խորհրդային իշխանութեան իրական ոյժն է, մտասնելի յենարանը: Պետական թէ հասարակական գործերը մեծ մասամբ նրա միջոցով են կատարուած: Երիտասարդի փառասիրութիւնն այդ գործերի մէջ իր գոհացումն է ստանում և նա իրաւամբ բացաղանւում է. «Պետութիւնը ես եմ, Կոմսոմոլը»:

Կոմսոմոլը կտրւած է ծնողներից. նա գինեորազրուած աշխատանքային ոյժ է: Նրան ջրում են ամէն կողմ և նա անտրտունջ պէտք է դնայ: Լեոնարդիւնաբերութեան բանտրութիւնը դասալիք փախչում է, — նրա տեղը կոմսոմոլը պէտք է բռնէ: Նոր գործարան պէտք է շինել, անխտիր թէ ուր՝ Ուրալում, Ուլյանկատանում թէ Սիբիրում, կոմսոմոլը ենթարկուած է գորաչարժի, և խմբերը գինեորական կարգապահութեամբ պէտք է զման աշխատելու: Բամբակի ճակատում ճեղքածք է բացւում, կոմսոմոլը պէտք է լեցնէ: Կոմսոմոլը պէտք է օգնի և Չեկային: Յուանդուն ու հաւատարիմ կոմսոմոլը կարծանալով պատուի ու պաշտօնի, լոբբատը՝ մահաւան: Ներկայիս խորհրդային բանտրների և ծառայողների 80%օ կազմում են 17—23 տարեկան երիտասարդներ:

Գոհ է կոմսոմոլը իր վիճակից: Ընդհանուր առմամբ՝ այո՛, որովհետև նախ՝ ուրիշ վիճակի մասին զաղափար չունի, երկրորդ՝ բոլշևիկներ իր ամբողջ ունեցածը կոմսոմոլին է արամաղրել՝ հաց, պաշտօն, զարոյց, բնակարան, հագուստ, գրօսավայր:

Կոմսոմոլը ընտանեկան հոգսից ազատ է: Կոմսոմոլուն նոյնքան ազատ է և իրաւատէր, որքան և կոմսոմոլը: Երեխայի ծննդաբերութիւնը տառնմին հոգս չէ նրա համար. նա միշտ էլ կարող է նրանից մարբել. կարող է ծնածին թողնել հիւանդանոցում և վերադառնալ իր հանրակացարանը:

Բարքերի ազականութիւն: Բուրժուական հասկացողութիւն է այդ. «Հին աշխարհը պէտք է հիմքից քանդել»: Սէ՛ր, բնտանիք, հաստատարութիւն, հայրենի՛ք, պատկառանք, ամօթխաճութիւն — անհասկանալի բանք համայնական կենսեին վարժուած կոմսոմոլի համար:

Մեծ գործարաններում, ազարակներում բանտրական շրջաններում, լեռնարդիւնաբերութեան մէջ աշխատող կոմսոմոլը այսպէս է: Կոմսոմոլի 75%ը բոլորովին կտրւած է ընտանիքից, օտարացած նրանց: Ընտանիքը նրան չի գրաւում: Նա մեծ ուղախութեամբ լեցնում է գինեորական շարքերը: Չինեորական ծառայութիւնը աւելի հեշտ է և արնայու տեսակէտից աւելի ազահով, քան բանտրութիւնը կամ ուսանողութիւնը: Կոմսոմոլը գինեորական մէջ մտնում է տարիներով, որով ստեղծում է մի նոր գինեորական կաստա: Հին, փորձած գինեւոր իր տեղը դժարութեամբ է գեջում նորին: Այս հողի վրա գոգհոգութիւնները զգալի կը դառնան մի քանի տարի յետոյ, երբ կարմիր բանակը ստեղծւած դինի աահմանախակել իր թիւը: Ան այժմ գինեորական հաստատութիւնները, կարմիր բանակը, միլիցիան, Չեկան դեռ շատ ազատ աեղեր ունին, ուստի և կոմսոմոլի հոսանքը արժանանում է քաջալերութեան: Կոմսոմոլը կարմիր բանակը զարմնում է աւելի վրատահելի:

Հոկտեմբերիկից սկսած մինչև կոմսոմոլը, դաստիարակութեան գործում հետեւողական կերպով առաջ է տարւում մի հիմնական գիծ — բոլորովին կտրել արեմտեան թաղաքակրթութիւնից և ընկերային-թաղաքական կենսեի իրական ծածօթութիւնից: Խորհրդային երիտասարդը հրէշաւոր զաղափար ունի Ամերիկայի ու Եւրոպայի մասին, ուր գեշատիչ դրամատիկներ գեշեղ-ցերեկ աշխատատեղի արեւն են խում և ամբողջ ժամանակ մտածում են խորհրդային իշխանութիւնը տապալելու մասին: Կոմսոմոլը լուրջ կերպով հաստատում է, թէ ամբողջ աշխարհը ընկերային յեղափոխութեան նախորեակին է գտնուում: Այսպէս են ներշնչում նրան, և այդ հաւատով նա աւելի մոլեռանդ է գործում: Սակայն, քիչ չէ և հիասթափաղոյների ու ձթեղածների մէջ ընկնողների թիւը: «Տրոցկիստ» կոմսոմոլը նոյնքան մուլեռանդ հակաստալինական է, որքան Ստալինի կողմնակիցը՝ հակաբոլորիկստ...

Հ. Յ. Դաւնակցութեան դիւանից.

«ԽԵՆԹ» Ը Եւ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

«Յուսարբքում սուլում է ընկ. Սամսոնի «Օր. Սաթենիկ և Երանդ» պատմական փաստերով հարուստ գրքածրը, որ իր մէջ հետաքրքրական էջեր է պարունակում մեր կուսակցութեան 90ամեայ թւականների Պարսկաստանի գործունէութիւնից: Վերջին, № 147րդ մասում ընկ. Սամսոնը յիշում է Հ. Յ. Դ. ներկայացուցիչների և Բաֆֆու «Քննթիւ»ի նախաօրից՝ Սամսոն Տէր Պօղոսեանի միջև եղած բանակցութիւնները նախաորի արշաւանքի նախօրեակին:

Ո՛հ էջոն — Սամսոն Ո՛հ էջոն, որ այն ժամանակները գէնքի տեղափոխութեամբ էր դրադուած, Կոլլաօսից գալով Թաւրիզ՝ պատմում է ընկերներին, թէ ինքը «Երևանի (Մրզաստանի կամ Երրորդ) Կենտրոնական Կոմիտէի յանձնարարութեամբ բանակցել էր Ո՛հնթի հետ, որին պիտի փոխադրէր ատժամայ 25 մոսիսի հրացան և Համապատասխան ջանակութեամբ փամփոփուէր»:

Եւ աւելցանում է. «Տպաւորութիւնս այն է, որ Ո՛հնթը ձգձգում է և տրամադիր չէ տեղից շարժելու, սակայն, մերձեղ դեռ յուսահատ չեն. ա՛մէն կերպ արշատում են դոհացներ նրա բոլոր պահանջները և շարժել տեղից»: («Յուս», 9 դեկտ.):

Այս դէպքի մասին որոշ հետքեր մնացել են և Հ. Յ. Դ. դիւանական թղթերում՝ այն Համաձայնագիրը, որ կնքել է Ո՛հնթի և Հ. Յ. Դ. ներկայացուցիչների միջև, որ աւելորդ չենք Համարում հրատարակութեան տայ: Բայց նախ քան այդ, անհրաժեշտ ենք գտնում անկ հետևելու ծանօթութիւնները:

Մեր ընկերներն, ըստ երևոյթի, աւանձին կարևորութիւն էին տալիս Ո՛հնթի մասնակցութեան նախաորի արշաւանքին: Եւ այդ հաւակնայի է Հ. Յ. Դ. Ո՛հնթի անունը խիստ ժողովրդական էր և կարող էր նպաստել արշաւանքի յաջողութեան: Թուում է թէ Ո՛հնթը ինքն էլ նպատում էր, որ իրենով հետաքրքրեն, բայց կուի դաշտ երթալու շատ էլ տրամադիր չէր: Յամենայն դէպս, նա այն հերոսներից չէր, որոնք ստանց որևէ հաշի նետում են վտանգի գիրի՛ր միայն իրենց զապարհին ծառայած լինելու մասհողութեամբ: Մինչ նախաորի անձնագրհ փաղանքը կազմող Հարիւրաւոր մարտիկները՝ Թողած սուն, տեղ, գործ ու Հարպատներ՝ առանց պայմանի և նիւթական ակնկալութեան շտապում էին կուի դաշտ, Ո՛հնթը ամիսներով սակարկում էր, իրեն և իր որդու Համար նիւթական ապահովութիւն էր պահանջում, իր մասնակցութիւնը արշաւանքին պայմանաւորում էր որոշ արտօնութիւններով, մի խօսքով՝ աւելի մտածում էր իր անձի, քան գործի մասին:

Ո՛հնթի հետ բանակցում էին Երևանի մեր ընկերները, իսկ վերջնական պայմանագրութիւնը ստորագրողների մէջ կայ Դարա Մեյիքը: Սա ևս հետաքրքրական դէմք է, որ Դաշնակցութեան ստալին շրջանի կարևոր ուժերից մէկն է կղել: Հայ յեղափոխական շարժման պատմութեան ծանօթանալիս՝ նրա հետքը հանդիպում ենք շատ տեղեր — և՛ Պարսկաստան, և՛ Բարձր Հայք, և՛ Արարական զաշտ և նույն փակ Ամեհիկա, ուր սպաւած են նաև նրա յուշերը «Հայրենիք»ի էջերում: Ինչ որ խորհրդաւորութիւն կայ նրա կեանքի

ու գործունէութեան մէջ: Յարաշարժ, շատ գործերի մասնակից, շատերին գործակից, միշտ նորանոր ծրագրերն էր յղացող, մէկ ձեռնարկը շրջացած՝ միւսին նետող, մոլեռանդ յեղափոխական — այսպէս է պատկերանում մեզ Դարա Մեյիքը, որի կեանքն ու գործը կարող էր արկածալի վէպի նիւթ կազմել և, սակայն, մնացել է բոլորովին անտեսուած: Արժէ՛ որ ծանօթ մարդիկ զրին իրենց դիտցածները Դարա Մեյիքի մասին:

Բանակցութիւններին մասնակցել է և Սամսոն Ո՛հ էջոն՝ նոյնպէս մի վերին աստիճանի գրաւիչ դէմք, որի կեանքն ու գործն էլ մնացել են անյայտ հասարակութեան լայն շրջանների: Ո՛հ էջոն շատ աւելի բազմակողմանի ու փայլուն գործիչ էր, քան ինչ որ պատկերացւած է իր մասին եղած Համառոտ գրածքների մէջ: Մտեց ծանօթ ընկերների ու բարեկամների վրա բարոյական պարտք կայ զրելու իրենց յուշերը Ո՛հ էջոի մասին:

Հ. Յ. Դաւնակցութեան ներկայացուցիչների և Ո՛հնթի միջև ստորագրուած Համաձայնագիրը հետևան էր.

Հայ Յ. Դաշնակցութեան III Կոմիտէ (Երևանում)

1896 թի Ապրիլի 10ին Ե. Բաղախում, ներկայաւթեամբ տեղական կոմիտէի վեց անդամների, Պարսկաստանի մէկ անդամի և Դարա-Մեյիքի՝ վարդաբը (Սամսոն) պատուաւոր խոստում արեց՝ ինքը իր Բաջրի իմրով անցնել Մայր Հայրենիք, նրա ազատութեան սուրբ գործի համար գե՛մք բարձրացնել և որպէս Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան ազնիւ զինուոր մինչև կեանքի վերջին րոպէն պաշտպանել իր օգնութեան կարօտ Բոյրիքի և Եղարյանիքի, իսկ Դաշնակցութիւնը յստիւն աւաւ հետևեալ պարտաւորութիւնները կատարել. 1) սպա մօտ (100) հարիւր հրացան երկհարիւրական փամփուշտներով, 2) տալ երեք հազար (3000) ռուբլի, 3) Որդեգրել նրա փոքր որդուն, որը այժմ ուսանում է տեղական գիմնազիայում և 4) Երեք մարդիկ թուլ հարիւրին մտեցան, կամ այսպէս ասած նաշելով խմբի սեճութեանը՝ կոմիտէն պարտաւորում է պէտք եղած ծախսերը հագալ:

Անդամ Տեղային Կոմիտէի՝ Երևանցի, վարդաբ. Դարա Մեյիք.

Կնիք
Հ. Յ. Դաշնակցութեան
III Կենտրոնական Կոմիտէի.
Ի դիմաց III կոմիտէի՝ Արզու.

Այս Համաձայնագիրը մնաց չգործարարուած: Ինչպէս յայտնի է, նախաորի արշաւանքը տեղի չունեցաւ նշանակուած ժամանակին և յետաձգուեց 1897ին: Թերևս այդ եղաւ պատճառ, որ Ո՛հնթը տեղից շարժուեց: Բայց անհնար չէ և այն, որ նա սահմանափակ հրատարակեց իր յանձնառութիւնը կատարելու: Ցանկալի էր, որ իրազեկ մարդիկ, եթէ կան, այս մուկ կէտն ևս պարզէին:

ԷՊՈՒԱՐԴ ԲԵՐՆՇԱՅՆ

Դեկտ. 18ին, 82 տարեկան Հասակում, մեռաւ միջնադարին ընկերվարութեան ամենաականաւոր զէմ-
 քերից մէկը՝ գերման ընկերվարական կուսակցութեան անդամ Էդուարդ Բերնշտայնը: Մնւած Բերնշտայնը 1850
 թւին: Բէրնշտայնը երիտասարդ Հասակում, 1872ին, յարեց ընկերվարական շարժման և 90ական թւականներին յայտնի դարձաւ իր յօդածներով, որոնց մէջ Հիմնական վերազնահատութեան էր ենթարկում մարքսիստական վարդապետութեան սկզբունքները: 1899թ. լոյս տեսաւ նրա «Տեսական ընկերվարութիւնը և դործնական ընկերվարութիւնը» նշանաւոր աշխատութիւնը, որի մէջ նա հերքում էր դրամազլիի կենտրոնացման և դրամաշրջական Հասարակարգի անկման մարքսեան վարդապետութիւնը: Այս և ուրիշ զբաւեցնելով, Հիմնելով Անգլոյայի և Ներոպայի տնտեսական կեանքի նոր տեսլանքի վրա, գալիս էր Հաստատելու, որ Հակառակ արդիւնաբերական դրամազլիի կենտրոնացման՝ միջին խաւերը չեն վերանում: Չի արդարանում և Մարքսի «Քշատութեան տեսութիւնը»: Ընդհակառակը, դրամատարրութեան զարգացումով՝ զգալի բարելաւում է նկատուում և բանորութեան տնտեսական և ընկերային վիճակի մէջ: Մասնաւորապէս գիւղացիութեան խնդրում՝ բոլորովին հերքում է Մարքսի կենտրոնացման վարդապետութիւնը: Գարգանում է մանր երկրագործութիւնը, որ մի շարք առաւելութիւններ ունի կենտրոնացած խոշոր գիւղատնտեսական ձեռնարկների Համեմատութեամբ: Քննելով ընկերային կեանքի զարգացման ուղիները և դասակարգային պայքարի խնդիրները՝ Բերնշտայնը յանգեց, մարքսիստական տեսակէտից, գերհերետիկոս եզրակացութիւններին՝ կանգնելով բնաշրջական, աստիճանական բարելաւմների տեսակէտի վրա: «Նպատակը ոչինչ է, շարժումը՝ ամէն ինչ» — Բերնշտայնի այս խօսքը լուսագոյն արտայայտել էր նրա քարոզած գաղափարաբանութեան ու գործելակերպի: Իր տեսակէտները Բերնշտայնը արժարծից և ուրիշ մի շարք խորունկ և ուսումնասիրութիւնների մէջ, ինչպէս «Ընկերվարութեան պատմութիւնը մենագրութիւններով», «Ընկերվարութեան պատմութիւնն ու տեսութիւնը», «Փէրդինանդ Լասալ» և այլն:

Բերնշտայնի վերաբնական գիրքը աներևակայելի փոթորիկ առաջ բերեց ուղղափառ մարքսիզմի շարքերում: Նրա զէմ դուրս եկաւ Կ. Կառլցկին, որ երկար ու կատաղի պայքար մղեց բէրնշտայնական հերձաւածի զէմ: Դուրս եկաւ և Ա. Բէթէլը և ուրիշ մարքսիստական հեղինակութիւններ: Դերման սոց.—դեմոկրատ կուսակցութիւնը պաշտօնապէս դատապարտեց Բերնշտայնին և նրա վարդապետութիւնը, բայց այդ արգելք չեղաւ, որ Բերնշտայնի մտքերն աւելի և աւելի տարածւեն և պատերազմից յետոյ նոյն իսկ ընդունեն նրա Հակառակորդներից շատերի կողմից: Պատերազմից յետոյ Կառլցկին էլ կանգնեց մարքսիզմի վերաբնութեան ճանապարհի վրա, և զերմանական սոց.—դեմոկրատ կուսակցութեան նոր ծրագիրը մեծապէս Համակամ է նաև բէրնշտայնական գաղափարներով:

Էդ. Բերնշտայնը ոչ միայն տեսարան ու գրող էր, այլ և աչքի ընկնող քաղաքական գործիչ: Նա եռանդով մասնակցում էր կազմակերպական ու քաղաքական կեանքին, թէ որպէս Հասարակական գործիչ և թէ իբրև խորհրդարանի անդամ: Պատերազմի սկզբին նա անցաւ Հակառակորդների շարքը և յարեց սոց.—զէմ. անկախների Հատումին: Պատերազմից յետոյ դուրս եկաւ որպէս անհայտ Հակառակորդ բոլշեիկների: Կ. Կառլցկու հետ Բերնշտայնը ամենատուր և անդողջ ջննդատուղն էր խորհրդային իշխանութեան:

Էդ. Բերնշտայնը մէկն էր այն լուսամիտ և առջաւոր եւրոպացիներից, որոնք այնպէ՛ս անկեղծօրէն աջակցեցին Հայ ազատագրական շարժման՝ մինչև մահ մնալով Հայ Ժողովրդի անդաւաճան բարեկամների շարքում: Մասնաւորապէս յայտնի է նրա գործուն մասնակցութիւնը Հայկական պրոպագանդին՝ կազմակերպւած «Դրօշակ» խմբագրութեան կողմից 25-30 տարի առաջ: Բերնշտայնի մէկ դասախօսութիւնը՝ «Հայկական տանջանքները և Եւրոպան» լոյս տեսաւ և առանձին գրքով Հայերէն և օտար լեզուներով: Մինչև մահ Բերնշտայնը մտաց բարեկամ և Հ. Յ. Դաշնակցութեան: Նրա մահան առթիւ Հ. Յ. Դ. Բիւրօն Հեռագրով ցատկային յայտնեց Գերման Ընկերվարական կուսակցութեան:



Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆԻ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻԻՆԸ

Հ Ա Տ Ո Ր Ա .

Հիմնադրութեմէն մինչեւ Օսմ. Սահմանադրութիւն

(1890 — 1908թ.)

Շուրջ 500 մեծադիր էջ, 80 պատկերներ

. Դինը՝ Չրամնաա, Սիւրիա, Ռումանիա, Բուլղարիա, Յունաստան՝ 40 Փրանք:
 Ուրիշ երկրներ՝ 50 Փրանք, կամ 2 դոլար: Դիմել « ԴՐՕՇԱԿ »-ի Հասցէով:



Մ Ա Մ ՈՒ Լ

ԲԱՅԻԱՅ Է ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆԻՆԸ

« ՀԱՅՐԵՆԻՔ » ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

« ՀԱՅՐԵՆԻՔ » ԱՄՍԱԳՐԻՐ Տարեկան բաժնեգին

5 տալար

« ՀԱՅՐԵՆԻՔ » ԱՄՍԱԳՐԻ Եւ ՕՐԱԹԵՐԹԸ միասին
10 տալար

« ՀԱՅՐԵՆԻՔ » Ամսագիրը հայ երկակնութեան
ամենափայլուն փարոսն է, ժամադրափայլը մեր լուսա-
զոյն և կարողազոյն գրողներուն:

Իր գրական և զարգացական բաժիններն աննախըն-
թաց են հայ կեանքի մէջ:

Իր կանոնադր չհաստատուած իրեն և տեական
կեանքը երեւոյթ մըն է անցեալ ու ներկայ մեր նման
ձեռնարկներու կողքին:

Իր ծաւալը կը զլէ կանցնի նախընթաց փորձե-
րունքը:

Իր գրական բաժինը մանաւանդ արժանացած է
ամենաշքեղ գնահատութեան:

Մեր զարգացական-ընկերային կեանքին նւիրած
էջերը հարուստ ամբարանոց մըն են ներկայի և ապա-
զայի համար:

« Հայրենիք » Ամսագիրը վտահելի և ապահով
մտաւոր արեւոյտը մըն է, մշտապէս սեղանի վրա
բազմոյ բարեկամ մը, ոնէ՛լ ատեն նոյն և հարազատ
արտայայտութիւնն ունեցող ընկեր մը:

Նոր տարեշրջանի բաժանորդագրութեան ներկայ
քէմփէյիին առթիւ « Հայրենիք » Ամսագրին իրենց բա-
ժանորդագրութիւնները նորոգողները իբր նէք պիտի
ստանան:

« Յուսարեք » օրաթերթ.

Տարեկան՝ 40 շիլին
Կէս տարւան՝ 20 շիլին

Հասցէ՝

«Houssaper», B. P. 868,
Le Caire, Egypte.

« Յառաջ » օրաթերթ.

Տարեկան՝ Ֆրանսա և գաղութներ 140 Փր., Ամե-
րիկա, Անգլիա, Երիզպոս, Զւիցերիա, Իտալիա՝
250 Փր., ուրիշ երկրներ՝ 200 Փրանք:

Հասցէ՝

«Haratch», 17, rue Damesme, Paris (13^e)

« Նոր Օր » օրաթերթ.

Տարեկան՝ 420 տրախմի
Կէս տարւան՝ 210 տրախմի

Հասցէ՝

«Nor Or», 20 A, rue Vouli,
Athènes, Grèce.

« Ալաու հոսֆ » օրաթերթ.

Տարեկան՝ 550 լէվա
Կէս տարւան՝ 300 լէվա

Հասցէ՝

45, Bd. Dondoukoff,
Sofia, Bulgarie.

« Ալիֆ » շաբաթաթերթ.

Կէս տարւան՝ 35 Փրանք

Հասցէ՝

22, Ave. Ala-ed-Dovleh,
Téhéran, Perse.

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ ՈՒ Մ Ը

որ պիտի սարունակէ ինչո՛րէ՛ր. Հայաստանի և արտա-
սահմանի մեր լուսազոյն գրողներու ամենէն ընտիր,
կարճ, համով հոտով պատմաճշման, որոնք պիտի
ըլլան ընթերցանութեան ճշմարիտ խնջոյք մը և պիտի
ունենան տեսական արժէք մեր գրաբարաններուն մէջ:

ԱՄՍԱԳՐԻ ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿ

Այս ժողովածուէն զատ, Ամսագիրը պիտի հրա-
տարակէ վերջին տարւան ընթացքին « Հայրենիք »
Ամսագրին մէջ երեցած նիւթերու ցանկը, այլուրեւնա-
կան կարգով, հեղինակներու անուններով և թէ նիւ-
թերու մասնաւոր դասակարգումով: Նիւթերու ցանկն ալ
արժէքաւոր գործ մըն է, որ կը դիւրացնէ ընթերցող-
ներու կատարելիք աշխատանքը և պըպտումները:

Հ. Յ. Դ. ԳԻՒՆԱՆԻ ԹՂԹԵՐԸ

« Հայրենիք » Ամսագիրը յառաջիկայ տարեշրջանին
պիտի հրատարակէ բացի իր սովորական աշխատակից-
ներու գրութիւններէն, մեր ժամանակակից պատմու-
թիւնը շոշափող նոր փաստաթուղթեր, զարած Հ. Յ.
Դաշնակցութեան ժընեի դիւանատունէն: Ասոնք կը
ներկայացնեն մեծ շահագրգռութիւն:

ԱՄՍԱԳՐԻ ԲԱՑԱՌԻԿ ԹԻՒԼ

Դարձեալ յառաջիկայ տարւան ընթացքին Ամսա-
գիրը պիտի հրատարակէ բացառիկ թիւ մը, մեր սո-
վորական և լուսազոյն գրողներուն աշխատակցութեամբ
իր տասնամեակին առթիւ:

Հասցէ՝

Hairenik Press, 13-15, Shawmut st.
Boston Mass, U. S. A.

« Ազդակ » երկօրեայ.

Տարեկան՝ 6 դոլար
Կէս տարւան՝ 4 դոլար

Հասցէ՝

«Azdag», B. P. 587,
Beyrouth, Liban.

« Ասպարէզ » շաբաթաթերթ.

Տարեկան՝ 2 դոլար

Հասցէ՝

«Aspares», P. O. Box 865.
Fresno, Calif., U. S. A.

« Արմենիա » շաբաթաթերթ.

Տարեկան բաժնեգինը՝ 5 րէսօ

Հասցէ՝

Canning 1087
Buenos-Aires, R. A.

« Արազ » եռօրեայ թերթ.

Տարեկան բաժնեգինը 500 լէվ

Հասցէ՝

3, Str. St. Ion-Nou,
Bucaresti, Roumanie.

« Հորիզոն » օրաթերթ.

Տարեկան Յունաստան՝ 300 տրախմի, արտասահ-
ման՝ 150 Փրանք:

Հասցէ՝

«Horizon», 2, Rue Franguini,
Salonique, Grèce.

